«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է քոլեջի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 15

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 17

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 17

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 21

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 28

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 36

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 41

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 45

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 48

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 53

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 55

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 59

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 64

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 66

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 71

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 72

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման փուլում:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը սահմանափակ պատասխանատվության ընկերություն է, որն իր առաքելությունն է համարում այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին, համապատասխան գործողություններով կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը: 2019-2024 թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հիմքում են դրվել նախորդ 2016-2019 թթ. ծրագրի արդյունքները: Քոլեջը փորձել է գործող ծրագիրը կազմել՝ այն որոշակիորեն համապատասխանեցնելով իր շահակիցների կարիքներին: Քոլեջի կողմից սահմանվել են գնահատման առանցքային ցուցանիշներ ընթացիկ նպատակների գնահատման համար, այսուհանդերձ նշյալ ցուցանիշները դեռևս պետք է դառնան առավել չափելի և ընդգրկեն քոլեջի սահմանած բոլոր նպատակների և առաջադրված խնդիրների կատարումը: Կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից քոլեջը փորձել է կանոնակարգել պլանավորման և հաշվետվողականության գործընթացները՝ սահմանելով համապատասխան ձևաչափեր: Այս տեսանկյունից նկատելի է որակի ապահովման համակարգի դերը քոլեջում ընթացող բոլոր գործընթացների համակարգման, ստորաբաժանումների աշխատանքի պլանավորման և հաշվետվողականության պարբերականության ապահովման համար: Քոլեջում որոշակիորեն կանոնակարգվել են նաև որոշումների կայացման գործընթացները, սակայն դրանք դեռևս չեն իրականացվում միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, ներքին շահակիցները նախաձեռնողական չեն իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներում առաջարկություններով հանդես գալու համար: Ֆինանսական և նյութական ռեսուրսների սղությունը ևս որոշակիորեն խոչընդոտում է հաստատության սահմանած նպատակների արդյունավետ իրականացումը և զարգացման կայունությունը:

Այսպիսով, հաշվի առնելով քոլեջում վերջին տարիներին տեղի ունեցող բարեփոխումների ընթացքը, նկատելի է, որ քոլեջը գնում է իր գործընթացները կանոնակարգելու ճանապարհով, սակայն կառավարման գործընթացները դեռևս բավարար չափով չեն նպաստում քոլեջի գերակա ուղղությունների համաչափ զարգացմանը:

Քոլեջը բժշկական ոլորտի միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակում: Քոլեջում առկա են «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ» մասնագիտությունները: Մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայվել են 2021թ.՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրթական ծրագրերում սահմանված վերջնարդյունքներն ընդհանրացման և հստակեցման կարիք ունեն: Քոլեջում դեռևս ձևավորված չէ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության համալիր քաղաքականություն, գնահատման համակարգը լիովին չի արտացոլում սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը: Փորձագիտական խումբն անհրաժեշտ է համարում կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացումը և լավագույն փորձի տեղայնացումը և գտնում, որ մշտադիտարկումների և գործընթացների արդյունավետության գնահատման արդյունքները պետք է դրվեն հետագա բարելավումների հիմքում:

Քոլեջը վերջին ժամանակահատվածում առաջընթաց քայլեր է կատարել ուսումնական միջավայրի բարելավման ուղղությամբ, սակայն նյութատեխնիկական բազայի համալրման գործընթացները որոշակիորեն դանդաղում են՝ պայմանավորված ֆինանսական միջոցների սղությամբ: Այս տեսանկյունից քոլեջի համար լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավումը լրացուցիչ ծառայությունների, նախապատրաստական մասնագիտական դասընթացների իրականացման միջոցով որոշակիորեն կարող է նպաստել գործընթացների ակտիվացմանը: Քոլեջը առաջիկա տարիներին պետք է շեշտադրի նաև կրթական վերջնարդյունքներին համապատասխան ռեսուրսային միջավայրի ապահովումը Որակավորումների ազգային շրջանակին համահունչ միջին մասնագիտական կրթությամբ բժշկական ոլորտի առավել մրցունակ կադրեր թողարկելու համար:

Փորձագիտական խումբը կարևորում է դասախոսական կազմը պրակտիկ մասնագետներով համալրելու քոլեջի միտումները: Քոլեջը որոշակի ջանքեր է գործադրում նաև դասախոսական կազմի խրախուսման և կայունության ապահովման համար: Դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների հստակ պլանավորումը, փորձի փոխանակման և ամբիոններում լավագույն փորձի տարածման մեխանիզմների ամբողջական ներդնումը կնպաստեն դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին:

Այսպիսով, կարելի է նշել, որ կրթական ծրագրերի բարեփոխումները դեռևս չեն հանգեցնում բովանդակային լավարկումների, կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար հաստատության ռեսուրսային բազան դեռևս բավարար չափով համալրված չէ: Այսուհանդերձ, քոլեջի շրջանավարտներն իրենց տեղը գտնում են

աշխատաշուկայում, քոլեջը շարունակաբար քայլեր է իրականացնում ծրագրերի բարելավման և մասնագիտական բարձր որակներ ունեցող մասնագետներով դասախոսական կազմի համալրման ուղղությամբ: Կարելի է եզրակացնել, որ բարեփոխումների ընթացքն ակտիվացնելու, համապատասխան ռեսուրսներ տրամադրելու դեպքում էականորեն կբարելավվի կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը քայլեր է իրականացնում կրթական ծառայությունների մատուցման բարելավման ուղղությամբ: Ուսանողները դասախոսական և վարչական կազմերից ստանում են համապատասխան աջակցություն և օժանդակություն: Գործընկեր հաստատությունների հետ համագործակցության արդյունքում ստեղծվել են պայմաններ ուսանողների կարիերային նպաստելու համար: Քոլեջի որակի ապահովման համակարգն աջակցում է ուսանողներին իրենց մատուցվող ծառայությունների բարելավման գործընթացում: Քոլեջը նպաստում է ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական կարողությունների ձևավորմանը՝ իրականացնելով համապատասխան խմբային և անհատական աշխատանքներ: Ուսումնական պլաններում հետազոտական աշխատանքների ամրագրումը, գնահատման բաղադրիչների հստակեցումը կարևոր նախադրյալներ են ինչպես ուսանողների հետազոտական աշխատանքների խթանման, այնպես էլ գնահատման օբյեկտիվության ապահովման համար:

Քոլեջի պաշտոնական կայքեջի գործարկումը և շարունակական համալրումը եռալեզու տեղեկատվությամբ, սոցիալական հարթակներում ակտիվությունը էական դերակատարություն ունեն իր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման, հետադարձ կապերի ամրապնդման համար: Քոլեջի կողմից այս մեխանիզմների բազմազանեցումը կբարձրացնի քոլեջի տեսանելիությունը իր շահակիցների համար, իսկ հասարակությանը արժեքներ փոխանցելու գործիքակազմի ներդնումը կնպաստի բարձր սոցիալական պատասխանատվության ձևավորմանը:

Հատկանշական են քոլեջի միտումները արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղություններով՝ թիրախավորելով հատկապես առաջիկայում միջազգային ուսանողներ ունենալու հանգամանքը: Նկատելի են նաև գործատուների և ՀՀ-ում բժշկական քոլեջների հետ ձևավորված համագործակցությունները, որոնք փորձի փոխանակման հնարավորություններ են ստեղծում քոլեջի համար: Կարևոր է հաստատության դասախոսների և ուսանողների օտար լեզվի մակարդակը բարձրացնելու ուղղությամբ քայլերի նախաձեռնումը միջազգայնացման գործընթացների առավել արդյունավետ իրականացման համար:

Հաշվի առնելով, որ քոլեջը միտված է ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկմանը, ինչպես նաև շարունակաբար ջանքեր է գործադրում գործընթացների թափանցիկության ապահովման, արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման գործընթացների ակտիվացման ուղղությամբ, կարելի է եզրակացնել, որ հաստատությունը ձգտում է ապահովել իր երկարաժամկետ զարգացումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. միջին մասնագիտական բժշկական կրթության ոլորտում բարձրորակ կրթություն մատուցելու և համապատասխան մասնագետներով աշխատաշուկան համալրելու մեծ նվիրումը և ջանքերը,
2. պլանավորման և հաշվետվողականության գործընթացների կանոնակարգումը,
3. ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկումը,
4. դասախոսական կազմում պրակտիկ մասնագետների ներգրավումը,
5. ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորմանը միտված գործընթացները,
6. հաստատության մասին թափանցիկության ապահովման գործիքակազմի առկայությունը,
7. արտաքին կապերի ձևավորման և համագործակցությունների հաստատման ընթացքը,
8. միջազգայնացման գործընթացների ակտիվացումը,
9. որակի ապահովման դերը հաստատության գործընթացների կանոնակարգման և բարելավման աշխատանքներում:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների գնահատման ու մշտադիտարկման մեխանիզմների անկատարությունը,
2. ներքին և արտաքին շահակիցների նախաձեռնողականության պակասն իրենց առնչվող որոշումների կայացման գործում,
3. ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը կառավարման և կրթական ծրագրերի լավարկման գործընթացներում,
4. կրթական ծրագրերի վերջնարդյունքներն ապահովող հանձնարարությունների, դասավանդման և գնահատման մեթոդների կիրառման ոչ ինստիտուցիոնալ բնույթը,
5. կրթական ծրագրերի բենչմարքինգի և մշտադիտարկման մեխանիզմների անկատարությունը,
6. դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների պակասը,
7. դասախոսների՝ հետազոտական աշխատանքներ իրականացնելու ցածր մոտիվացիան,
8. նյութական և ֆինանսական ռեսուրսների սղությունը ռազմավարական նպատակների իրականացման համար,
9. ֆինանսական աղբյուրների բազմազանեցման մեխանիզմների բացակայությունը,
10. դասախոսական և ուսանողական համակազմերի օտար լեզուների իմացության ցածր մակարդակը:

Խորհրդատվություններ

Առաքելությունը և նպատակները

1. Հստակեցնել «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի առաքելությունը՝ փոխկապակցելով հաստատության գործունեության առանձնահատկություններին և շեշտադրելով բժշկական ոլորտում ՄՈՒՀ-ի կարևոր դերակատարությունը:

2. Ներդնել գործուն մեխանիզմներ արտաքին շահակիցներին ռազմավարական կառավարման գործընթացներում ներգրավելու համար։
3. Վերամշակել և չափելի դարձնել ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացման գնահատման առանցքային ցուցանիշները՝ փոխկապակցելով ռեսուրսների, իրականացման իրատեսական ժամկետների, պատասխանատու օղակների և հաշվետվողականության մեխանիզմների հետ։
4. Վերամշակել ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների գնահատման ու մշտադիտարկման քաղաքականությունը՝ հստակեցնելով գնահատման մեխանիզմները, փոխկապակցելով ՌԾ գնահատման առանցքային ցուցանիշների հետ։

Կառավարումն ու վարչարարությունը

5. Բարելավել ստորաբաժանումների միջև գործառնական կապերը, հստակեցնել պատասխանատվության և գործառութային շրջանակը։
6. Ներդնել միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման ու հաշվետվողականության փոխկապակցման մեխանիզմներ։
7. Մշակել ներքին շահակիցների՝ իրենց առնչվող որոշումների վերաբերյալ նախաձեռնողականության խթանման մեխանիզմներ։
8. ՊԻԳԲ շրջափուլի կիրառումն ապահովել կառավարչական բոլոր գործընթացների իրականացման համար։
9. Լավարկել կառավարման գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները։

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Բարելավել ՄԿԾ-ները՝ հստակեցնելով և չափելի դարձնելով վերջնարդյունքները։
11. Ներդնել դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մեթոդների ընտրության մեխանիզմներ։
12. Ձևավորել ուսանողներին տրամադրվող ուսումնառության նյութերի և առաջադրանքների միասնական շտեմարան։
13. Մշակել և ներդնել ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշները՝ սահմանելով հստակ բաղադրիչներ։
14. Ներդնել կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման և լավագույն փորձի տեղայնացման գործուն մեխանիզմներ։
15. Կանոնակարգել ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմները՝ գնահատման արդյունքները դնելով հետագա բարելավման հիմքում։

Ուսանողները

16. Քոլեջի ուսանողների կարիքները հաշվի առնելով՝ ստեղծել լրացուցիչ պարապմունքների կազմակերպման հնարավորություններ։

17. Մշակել շրջանավարտների մշտապես թարմացվող տվյալների բազա՝ ներդնելով նրանց հետ հետադարձ կապի ապահովման արդյունավետ գործիքներ։
18. Ակտիվացնել Ուսանողական խորհրդի դերը՝ դառնալու ուսանողների կարիքների վերհանման ու իրավունքների պաշտպանության կարևորագույն կառույց։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

19. Մշակել բժշկական ոլորտի մասնագետներով ՊԴ կազմի ընտրության հստակ չափանիշներ՝ հաշվի առնելով ՄԿԾ վերջնարդյունքները։
20. Իրականացնել դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական պարբերական վերապատրաստումներ։
21. Վերանայել և բարելավել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և խրախուսման մեխանիզմները։
22. Մշակել և ներդնել սկսնակ դասավանդողների ուղղորդման, լավագույն փորձի տարածման գործիքակազմ։

Հետազոտությունը և զարգացումը

23. Բարելավել դասախոսների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավման մեխանիզմները։
24. Հստակեցնել ուսանողների հետազոտական ու վերլուծական աշխատանքների կատարման նպատակները և գնահատման պահանջները։
25. Ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել ուսումնառության և հետազոտական գործունեության փոխկապակցման մեխանիզմները։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

26. Առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար ներդնել ֆինանսական մուտքերի բազմազանեցման մեխանիզմներ։
27. Ապահովել կրթական ծրագրերի նպատակներին համահունչ նյութատեխնիկական բազայի շարունակական համալրումը և գործատուների ռեսուրսների համատեղ լիարժեք օգտագործումը։
28. Ներդնել մասնագիտական գրականության համալրման գործուն մեխանիզմներ, անդամակցել մասնագիտական և էլեկտրոնային գրադարաններին։
29. Ստեղծել փաստաթղթաշրջանառության ապահովման միասնական համակարգ։

Հասարակական պատասխանատվությունը

33. Ներդնել հաշվետվողականության արդյունավետ համակարգ՝ հաշվետվություններում ապահովելով վերլուծական բաղադրիչը։
34. Բազմազանեցնել քոլեջի մասին տեղեկատվության տարածման միջոցները՝ նպաստելով քոլեջի հեղինակության բարձրացմանը։

35. Զարգացնել հանրությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմները՝ հիմք ընդունելով քոլեջի ոլորտային առանձնահատկությունները:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

36. Համակարգել արտաքին կապերի զարգացմանն ուղղված հաստատության աշխատանքները՝ սահմանելով պատասխանատուների հստակ շրջանակ:

37. Բարելավել դասախոսական կազմի և ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակը:

38. Վերլուծել ՄՈՒՀ-ի հնարավորություններն ու համապատասխան քայլեր իրականացնել միջազգայնացման գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

Որակի ներքին ապահովման համակարգը

36. Բարելավել ներքին և արտաքին շահակիցներին ՈԱ գործընթացներում ընդգրկման մեխանիզմները:

37. Կատարելագործել ՄՈՒՀ-ի տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները՝ բարելավելով հարցումների մեթոդաբանությունը և ապահովելով տվյալների հավաստիությունը:

38. Ներդնել որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման և գնահատման գործուն մեխանիզմներ:

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23 փետրվարի, 2023 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Ասյա Սիմոնյան-** մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Մերի Սարգսյան-** Երևանի հենակետային բժշկական քոլեջի տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով, փորձագիտական խմբի անդամ:
3. **Աննա Սուքիասյան-** կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի գիտաշխատող, փորձագիտական խմբի անդամ:
4. **Շուշաննա Կարապետյան**- Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» բաժնի ուսանող, փորձագիտական խմբի անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետներ Ռոզա Բաբայանը և Մերի Բարսեղյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողները ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը դիմել է ՈԱԱԿ (19.04.2022թ)՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Ինքնավերլուծություն

ՄՈՒՀ-ն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացրել է 22.08.2022 թ.-ին: Ինքնավերլուծության գործընթացում ներգրավվել են հաստատության վարչական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները, դասախոսները, ուսանողները:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Սահմանված ժամկետում ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը ընդունվել է ՈԱԱԿ-ի կողմից: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, ՄՈՒՀ-ի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն[3], զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց
[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

Նախնական այց

2022 թվականի նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. դեկտեմբերի 12-15-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցին նախորդող շրջանում փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները[4], իրականացրել դասալսումներ: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

[4] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Այնուհետև նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 07.02.2023 թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Այնուհետև ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հաստատության դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Հաշվի առնելով այդ դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 23.02.2023թ.-ին:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

23 փետրվարի, 2023 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Գրիգորիս» բժշկա–հումանիտար քոլեջ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ) ստեղծվել է Երևանի տնտեսա-իրավագիտական համալսարանից առանձնացման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում, հանդիսանում է նրա իրավահաջորդը և շարունակում իր առաքելությունը՝ պահպանելով իր բարի համբավն ու նաև ճանաչումը արտերկրում: «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն այնպիսի մասնագետներ պատրաստելն է, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին՝ համապատասխան գործողություններով, կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը:

Կրթություն. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջն իրականացնում է հիմնական կրթական ծրագրեր՝ միջնակարգ լրիվ ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքերով, ուսանողակենտրոն մոդուլային ուսուցմամբ: «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը ՀՀ օրենսդրությամբ, իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում, ՌԾ-ի նպատակների դրույթներին համահունչ, իրականացնում է միջին մասնագիտական կրթություն: ՄՈՒՀ-ում իրականացվում է 4 ՄԿԾ՝ «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ»:

Ներկայումս «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում ուսումնառում է 122 ուսանող: Քոլեջը հիմնադրման պահից մինչ այժմ թողարկել է շուրջ 1400 շրջանավարտ:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. Գրիգորիս բժշկա-հումանիտար քոլեջն իր ռազմավարական նպատակների և առաքելության շրջանակում հստակեցնում է Քոլեջի հետազոտական գործունեության ուղղությունները, շեշտադրելով գերակայությունները և դրանց ռազմավարական նշանակությունը տարբեր մակարդակների համար:

Համաձայն գործող ներքին նորմատիվ փաստաթղթերի՝ մշակվում և իրականացվում են ստեղծագործական, հետազոտական, փորձարարական աշխատանքներ (կուրսային, դիպլոմային, նախագծային, ռեֆերատիվ և անհատական շնորհանդեսների ինքնուրույն պատ-րաստում և ներկայացում) գործող մասնագիտությունների շրջանակում:

Հետազոտական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և ապահովելու նպատակով իրականացվում է ուսումնական փաստաթղթերի, առարկայական ծրագրերի և ուսումնամեթոդական նյութերի վերանայում, լրամշակում՝ խթանելու ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում:

Արտաքին կապեր. Քոլեջի արտաքին կապերի համակողմանի զարգացումը և գործունեության միջազգայնացումը գերակա խնդիրներից է, որն ամրագրված է 2019-2024 թթ. ՌԾ-ում: Քոլեջի նպատակն է «ձգտել ընդլայնել Հայաստանի և արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակը, զարգացնել ուսումնառության արդյունքների փոխճանաչման մեխանիզմները՝ նպաստել ուսանողների, դասախոսների ակադեմիական տեղաշարժին և քոլեջի միջազգային վարկանիշի ձեռքբերմանը»:

Որակի ապահովում. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջն իր առաքելության, Որակի ներքին ապահովման քաղաքականության համաձայն բարելավում և զարգացնում է քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ նպատակ ունենալով պատրաստել ժամանակակից տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան միջին մասնագիտական որակավորմամբ մրցունակ մասնագետներ: Սկսած 2019 թվականից քոլեջում իրականացվում են հիմնարար բարեփոխումներ, իսկ արդյունքում ձևավորված միջավայրում ստեղծվել են բարենպաստ պայմաններ՝ արդյունավետ ուսումնական գործընթաց իրականացնելու համար, որին անմիջական մասնակցություն ունեն նաև ուսումնառողները: Քոլեջի ՈԱ պատասխանատուի կողմից ակտիվ աշխատանքներ են իրականացվում որակի ներքին ապահովման մշակույթի ամբողջական ներդրման, ներքին շահակիցներին հետազոտական աշխատանքների ներգրավման և միջազգայնացման ուղղությամբ:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ն իր գործունեությունն իրականացնում է համաձայն իր կանոնադրության, ըստ որի «Քոլեջի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հիմնական նպատակն է իրականացնել միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հանրակրթության գործունեություն», չնայած կանոնադրական նպատակներում սահմանված է նաև բարձրագույն մասնագիտական կրթության իրականացումը, սակայն ներկա փուլում ՄՈՒՀ-ը իրականացնում է բացառապես միջին մասնագիտական կրթություն՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքով՝ առաջնորդվելով պետական կրթական չափորոշիչներով համաձայն ՈԱԾ-ի 5-րդ մակարդակի: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հետագայում հիմնադիրը նախատեսում է գործունեություն ծավալել նաև բարձրագույն կրթության ոլորտում:

ՄՈՒՀ-ն իր առաքելությունն է համարում այնպիսի մասնագետներ պատրաստելը, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին՝ համապատասխան գործողություններով կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը: Հարկ է նշել, որ առաքելության տվյալ ձևակերպումը չի արտացոլում քոլեջի ոլորտային առանձնահատկությունը: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցի ընթացքում ներքին և արտաքին շահակիցները շեշտադրում էին, որ քոլեջը հաջողությամբ կատարում է իր առաքելությունը և պատրաստում բժշկական ոլորտի մասնագետներ, որոնք հաջողությամբ անցնում են աշխատանքի իրենց մասնագիտությամբ, կամ շարունակում են կրթությունը բուհական մակարդակում:

Ի դեմս Հիմնադրի՝ 2019թ. ՄՈՒՀ-ը նախաձեռնել է կառավարման համակարգի կառուցվածքային և միջին մասնագիտական կրթության ծրագրերի բարեփոխումներ, որի նպատակով 2019 թվականին ՈԱ պատասխանատուի կողմից իրականացվել է գործող (2016-2026թթ.) ՌԶԾ-ի 2016-2019 թթ. ժամանակահատվածի վերլուծություն: Վեր են հանվել մի շարք խնդիրներ, այդ թվում՝ ռազմավարական ծրագրում ժամկետների ոչ իրատեսական լինելը, առաջընթացի գնահատման ցուցիչների բացակայությունը: Ներկայացված կատարողական զեկույցը քննարկվել է տնօրինական խորհրդում և ստացել համապատասխան արձագանք: Արդյունքում վերանայված Քոլեջի առաքելությունը, տեսլականը, նպատակները և խնդիրները ըստ առաջնահերթությունների արտացոլված են նոր 2019-2024 զարգացման ռազմավարական ծրագրում, սահմանվել են առաջընթացի գնահատման ցուցիչները (գնահատման արդյունարար ցուցիչներ):

Քոլեջում իրականացված բարեփոխումները հիմք են հանդիսացել, որ քոլեջի ներքին (դասախոսները և ուսանողները) և արտաքին շահակիցները (գործատուներ) ընդգրկվեն նաև կառավարման օղակներում՝ ընդհանուր ժողովում և տնօրինական խորհրդում, ակտիվացել են նաև հանդիպում-քննարկումները շահակիցների հետ։

Ըստ ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության՝ ներքին և արտաքին շահակիցների կողմից բարձրացված խնդիրները պարբերաբար քննարկվում են տնօրինական, մանկավարժական խորհուրդներում, քոլեջը արդյունավետ է համարում ստուգումների, դասալսումների, հարցումների, միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների արդյունքների քննարկումները, հանդիպումները սոցիալական գործընկերների հետ, արտաքին շահակիցների ներգրավվածությունը Պետական որակավորման հանձնաժողովներում:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ՄՈՒՀ-ը հետամուտ է ներքին շահակիցների հետ երկխոսությանը, իսկ արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները դեռևս ձևավորման փուլում են։ Արտաքին շահակիցների հետ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ վերջիններս պատրաստակամ են նպաստելու քոլեջի առաջընթացին՝ կարևորելով քոլեջի շրջանավարտների դերը որպես ոլորտի ներկայացուցիչներ և գործատուներ։

Պետական որակավորման քննություններին մասնակցում են հրավիրված մասնագետներ սոցիալական գործընկերներից։ Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ընթացքում, սոցիալական գործընկերների մասնակցությունը բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համար աշխատանք գտնելու հնարավորություն է, այպիսի հնարավորությունները ավելի ակնհայտ են «Դեղագործություն» մասնագիտության շրջանավարտների համար։

Քոլեջը կազմել է նաև նոր 2019-2024 ՌԾ պլան ժամանակացույցը, որտեղ ակնկալվող արդյունքները հապատասխանեցված են ըստ ՌԾ խնդիրների սահմանված ԳԱՑ-երի (գնահատման առանցքային ցուցանիշների) հետ: Հարկ է նշել, որ տերմինաբանական տարընթերցումների տեղիք են տալիս տարբեր փաստաթղթերում տարբեր կերպ գնահատման առանցքային ցուցանիշների ներկայացումը, ՌԾ-ում նշվում է գնահատման արդյունարար ցուցիչներ և առաջընթացի գնահատման ցուցիչներ, ՌԾ պլան ժամանակացույցում նշվում է՝ ակնկալվող արդյունքներ, ինչպես նաև կա առանձին փաստաթուղթ գնահատման առանցքային ցուցանիշների վերաբերյալ։ ԳԱՑ-երի բովանդակային կողմը դիտարկելիս հարկ է նշել, որ հիմնականում համապատասխանում են սահմանված նպատակներին և խնդիրներին: Երբեմն գործընթացի կատարման ցուցանիշ դիտարկվում է փաստաթուղթը (օրինակ՝ խնդիր 1.2.1 Բարելավել մանկավարժական համակազմի մասնագիտական գործունեությունը, ակնկալվող արդյունքն է գործող կանոնակարգը և միջոցառումների պլան-ժամանակացույցը և կատարողականները), կամ ցույց չի տալիս ակնկալվող արդյունքը (խնդիր 2.1.7՝ «Կազմակերպել տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելության ապահովման ուղղությամբ», որի համար ակնկալվող արդյունքը գործող օտար լեզվով առնվազն մեկ կրթական ծրագիրն է, որը ըստ էության ԿԾ-ն օտարերկրյա ուանողների

ընդունելության համար նախապայման կարող է հանդիսանալ, բայց ոչ ակնկալվող արդյունք):

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քոլեջի ՌԾ բարելավումը պայմանավորված է նաև որակի ապահովման պատասխանատուի գործունեության հետ, որի արդյունքում տեղի են ունեցել գործընթացների համակարգում և մի շարք կարևոր փաստաթղթերի մշակում, ընթացակարգերի և քաղաքականությունների համապատասխանեցում նոր ՌԾ-ին, կառուցվածքային մոդելի վերանայում և այլն: Կառուցվածքային և այլ փոփոխությունները հիմնված են համանման այլ քոլեջների փորձի ուսումնասիրություններով: Մշակված և վերանայված փաստաթղթերը քննարկվել են ներքին շահակիցների հետ, առկա առաջարկությունները ներկայացվել են տնօրինական խորհրդին:

Քոլեջն ունի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականություն և ընթացակարգ (2019թ.), որն իր բովանդակությամբ սահմանում է գնահատման ուղղությունները, սակայն հստակեցված չեն գնահատման մեխանիզմները և ակնկալիքները: Քոլեջը յուրաքանչյուր տարվա ավարտին իրականացնում է ՌԶԾ գնահատում՝ զեկույցով ամփոփելով ըստ սահմանված ԳԱՑ-երի քոլեջի ունեցած ձեռքբերումները և հետագա գործողությունները, սակայն դրանք ամբողջովին չեն արտացոլում առկա մարտահրավերները և ռիսկերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի միջին մասնագիտական բժշկական կրթության ոլորտում բարձրորակ կրթություն մատուցելու և համապատասխան մասնագետներով աշխատաշուկան համալրելու մեծ նվիրումը և ջանքերը, որը որպես այդպիսին հանդիսանում է ՄՈՒՀ-ի առաքելությունը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ առաքելության մեջ քոլեջի առանձնահատկության հստակեցումը կնպաստի արտաքին ու ներքին շահակիցների շրջանում քոլեջի դերի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի ՌԶԾ-ի վերանայման գործընթացների արդյունքները, մասնավորապես՝ ներքին և արտաքին շահակիցների կանոնակարգված ներգրավվածությունը կառավարման օղակներում, որակի ապահովման սկզբունքների որդեգրումը և դրանց համապատասխան բարեփոխումների իրականացումը: Վերոնշյալ փոփոխությունները թույլ կտան ՄՈՒՀ-ին երկարաժամկետ հեռանկարում հաջողությամբ իրագործել իր առաքելությունը և առաջադրված նպատակները:

Դրական է, որ ներքին և արտաքին շահակիցների կարիքներն արտահայտված են ՌԾ նպատակներում և խնդիրներում, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է ավելի մեծ ուշադրություն հատկացնի արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ամրապնդմանը և բազմազանեցմանը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին համընթաց բարելավել բոլոր կրթական ծրագրերը: Արտաքին շահակիցները ներգրավված են պետական որակավորման հանձնաժողովներում, սակայն գործատուների հետ հետադարձ կապի այլ մեխանիզմները դեռևս թույլ են զարգացած:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի նոր 2019-2024 զարգացման ռազմավարական ծրագրի մշակումը, պլան-ժամանակացույցի առկայությունը և ակնկալվող արդյունքների համապատասխանեցումը սահմանված ՌԾ գնահատման առանցքային ցուցանիշների հետ:

Դրական է, որ գնահատման առանցքային ցուցանիշները հիմնականում համապատասխանում են սահմանված նպատակներին և խնդիրներին, սակայն դրանք վերանայման կարիք ունեն. մի շարք դեպքերում արդյունք է համարվում ընթացակարգերի առկայությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է հետամուտ լինի գործընթացների քանակական և որակական ցուցանիշների բարելավմանը, որը կնպաստի քոլեջի շարունակական բարելավմանը բոլոր ոլորտներում: Միևնույն ժամանակ դրական է, որ ՄՈՒՀ-ը հետամուտ է իր սահմանած նպատակներին հասնելուն: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի կողմից գնահատման առավել օբյեկտիվ և իրատեսական առանցքային ցուցանիշների սահմանումը, որը թույլ կտա չափելի արդյունքների հասնել:

Դրական է ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքերի գնահատման քաղաքականության և ընթացակարգի (2019թ.) առկայությունը, որն իր բովանդակությամբ սահմանում է ՌԾ-ի պարբերաբար վերանայման անհրաժեշտությունը, սակայն ներկայացված չեն արդյունքների գնահատման մեխանիզմները: Այսուհանդերձ, դրական հանգամանք է հաշվետվություններում ՌԾ նպատակների և ԳԱՑ-երի արտացոլումը, ինչը որոշակի պատկեր է տալիս քոլեջի սահմանած նպատակների և իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ: Փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման մեխանիզմների հստակեցումը, հիմքում դնելով սահմանված ժամկետներում գործողության իրատեսականությունը, կատարման աստիճանը, կնպաստի նպատակների վերաբերյալ հավաստի տվյալների ձևավորմանը և առկա մարտահրավերների վերհանմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի գործունեությունը համապատասխանում է սահմանված առաքելությանը և նպատակներին, ներքին և արտաքին շահակիցների կարիքներին, վերանայվել և բարելավվել է Զարգացման ռազմավարական ծրագիրը, սահմանվել են գնահատման առանցքային որոշակի ցուցանիշներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի կառավարման բարձրագույն մարմինը Ընդհանուր ժողովն է, որն ունի քոլեջի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, գործունեության ժամկետը 5 տարի է: Ընդհանուր ժողովի նիստերը գումարվում են տարեկան 2 անգամ: Ընդհանուր ժողովի նախագահը հաստատության բաժնետոմսերի միակ սեփականատերն է՝ քոլեջի հիմնադիրը: Քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից նշանակված տնօրենը, իսկ քոլեջի ռազմավարական նշանակություն ունեցող հիմնահարցերի վերաբերյալ որոշումները կայացվում են հիմնադրի կողմից: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ հիմնադիրն անմիջականորեն ներգրավված է քոլեջի կառավարմանն ու որոշումների կայացմանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը, շարունակական կապի մեջ է վարչական, դասախոսական և ուսանողական համակազմի հետ:

Քոլեջում որոշումների կայացման և հրապարակման համար կան ստեղծված վարչական և կառավարման մարմիններ, որոշումների կայացումը կանոնակարգվում է մանկավարժական խորհրդի, տնօրինական խորհրդի և ընդհանուր ժողովի աշխատանքային ընթացակարգերով: Մանկավարժական խորհրդի օրակարգում կարող են ընդգրկվել բոլոր ընթացիկ խնդիրները, իսկ համապատասխան առաջարկներն ուղղորդվում են տնօրինական խորհուրդ, ապա Ընդհանուր ժողով: Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, ամբիոնների վարիչները, կուրսղեկները, բոլոր դասախոսները և Ուսանողական խորհրդի անդամներ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման համակարգի վերանայման գործընթացն իրականացվել է 2018-2019 ուստարվա ընթացքում: Քոլեջում տեղ գտած բարեփոխումների արդյունքում (2019թ) վերանայվել են քոլեջի կառուցվածքային միավորները, ստեղծվել են անհրաժեշտ պատասխանատու ստորաբաժանումները, վերակազմավորվել են պրակտիկայի և կարիերայի բաժինը, ՄՌԿ և ընդհանուր բաժինը, ձևավորվել է արտաքին կապերի բաժինը, նշանակվել է որակի ապահովման պատասխանատու և քաղպաշտպանության շտաբի պետ: Կառուցվածքում թեև տեղ է գտել արտաքին կապերի բաժինը, սակայն մինչ օրս բաժինը որպես առանձին միավոր չի գործարկվել ֆինանսական միջոցների սղության պառճառով, իսկ պարտականությունները համատեղությամբ կատարում են ՈԱ և պրակտիկայի ու կարիերայի պատասխանատուները: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ քոլեջի արտաքին համագործակցությունը թե տեղական, թե արտասահմանյան գործընկերների հետ անմիջականորեն ղեկավարում է հիմնադիրը:

ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից են նաև ուսումնական մասը և ամբիոնները, ուսումնական մասը և ամբիոնները կիսում են համատեղ աշխատանքային տարածքը: Ըստ ԶՌԾ-ի՝ քոլեջն ունի 7 ամբիոն, որոնք վերակազմավորվել են և ներկայումս

գործում է 5 ամբիոն[5]: Ամբիոնների անվանումներն արտահայտում են տվյալ ամբիոնի կողմից դասավանդվող առարկայախմբերը՝ առանց խմբավորման և առանձնահատկությունների շեշտադրման: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ամբիոնների անմիջական շահակիցները՝ ուսանողները, լիարժեք չեն պատկերացնում ամբիոնների դերը իրենց կրթական կարիքների արձագանքելու գործընթացներում: Մինչև 2022-2023 ուսումնական տարին ամբիոնի վարիչները զորձել են հասարակական հիմունքներով, ներկայումս սահմանված է ամսական հավելավճար:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության համաձայն՝ նոր կառուցվածքն ապահովում է հորիզոնական և ուղղահայաց համագործակցության կանոնակարգված թիմային մոտեցում՝ ապահովված բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գծային կառուցվածքում արտահայտված են հիերարխիկ կապերը, ավելի թույլ են արտահայտված փոխադարձ գործառնական կապերը: Այսպես օրինակ փորձագիտական այցը ցույց տվեց, որ ՈԱ պատասխանատուն ունի գործուն դերակատարություն, համագործակցում է բոլոր ստորաբաժանումների հետ, սակայն կազմակերպական գծապատկերը դա չի արտահայտում: Ստորաբաժանումների ղեկավարների անմիջական գործառույթների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա են կրկնվող գործառույթներ, օրինակ՝ ուսումնական մասի ու պրակտիկայի և կարիերայի բաժնի աշխատանքներում:

Քոլեջի ֆինանսական ներհոսքերը սահմանափակ են և պայմանավորված են ուսանողների վարձավճարներով, որպես այլընտրանքային ֆինանսական հոսքերի ներգրավման աղբյուր քոլեջը դիտարկում է դրամանշնորհները կամ օտարալեզու կրթական ծրագրի իրականացումը: 2022-2023 ուստարում նախատեսվել է մեկնարկել օտարալեզու կրթական ծրագիր, սակայն ծախսարդյունավետության տեսանկյունից հետաձգվել է: Քոլեջը նախատեսում է օտարազգի դիմորդների ընդունելությունը կատարել 2023-2024 ուստարում:

Քոլեջի տարածքը վարձակալվում է, առկա է անհրաժեշտ կրթական տարածք՝ հաշվի առնելով ուսանողների քանակ-լսարան հարաբերակցությունը: Հիմնադրի անձնական ներդրումների միջոցով (շահութաբաժնի հաշվին) վերջին տարիներին համալրվել են քոլեջի կրթական ռեսուրսները (գործնական պարապմունքների իրականացման համար անհրաժեշտ նյութեր, պարագաներ, մուլյաժներ, կահույք, համակարգիչներ և այլն) ըստ առաջնահերթությունների: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ դեռևս ռեսուրսների համալրումը առաջնահերթ խնդիր է դիտարկվում քոլեջի համար մասնավորապես՝ սեփական շենքի ձեռբերումը:

Քոլեջի կառավարման համակարգում ներգրավված են ներքին և արտաքին շահակիցներ (դասախոսներ, ուսանողներ և գործատուներ): Քոլեջն ունի կառավարման և վարչարարության համակարգում դասավանդողների և ուսումնառողների մասնակցության ապահովման անհրաժեշտ ընթացակարգեր՝ տնօրինական խորհրդի, ընդհանուր ժողովի, մանկավարժական խորհրդի, ամբիոնի կանոնակարգեր: Ընդհանուր ժողովի կանոնակարգի

[5] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

համաձայն՝ անդամներն ընտրվում են դասախոսական և ուսանողական կազմից մանկավարժական և ուսանողական խորհրդի առաջարկմամբ, ինչպես նաև ժողովի անդամ է հիմնադիրը կամ նախագահը, կարող է լինել նաև մեկ արտաքին շահակից՝ նախագահի որոշմամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի Ընդհանուր ժողովում և տնօրինական խորհրդում ընդգրկված ուսանող ներկայացուցիչը ի պաշտոնե ՈՒԽ նախագահն է, իսկ մանկավարժական խորհրդում ընդգրկված են ՈՒԽ-ից երկու անդամ[6]:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներում դեռևս սահմանափակվում է նրանց պասիվ ներկայությամբ կամ ընթացիկ կրթական հարցերի քննարկումներին մասնակցությամբ: Ըստ էության, մանկավարժական խորհրդում ներգրավված են բոլոր դասախոսները, ուստի ընթացիկ խնդիրները լուծվում են այս օղակում և որոշումները ներկայացվում են տնօրինական խորհուրդ: Հարկ է ընդգծել, որ տնօրինական և մանկավարժական խորհրդի նախագահը տնօրենն է:

Համաձայն գործող ԶՌԾ-ի՝ ՄՈՒՀ-ը մշակել է գործողությունների իրականացման պլան-ժամանակացույց, որտեղ հստակ սահմանված են յուրաքանչյուր նպատակի և խնդիրների լուծման գործողությունները, սահմանված են ժամկետները և գնահատման արդյունարար ցուցիչները: ՌԾ-ի պլան-ժամանակացույցում որպես ակնկալվող արդյունք նշվում է, օրինակ խնդիր 1.1-ը «ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և պարտականությունների արդյունավետ ու հստակ գործառություն», որպես առաջընթացի ցուցանիշ նշվում է պաշտոնի անձնագիր՝ ըստ նոր կառուցվածքի, տվյալ ակնկալվող արդյունքը թույլ չի տալիս գնահատել՝ արդյոք իրականացվել է առաջադրված խնդիրը:

Բոլոր կառուցվածքային միավորների համար մշակվել և ներդրվել է գործունեության պլանավորման նոր միասնական ձևաչափ, որը նախատեսում է ՌԾ-ի հետ համահունչ ստորաբաժանումների երկարաժամկետ պլանավորում: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկարաժամկետ պլանավորումը դեռևս չի պարունակում կոնկրետ գործողություններ, հիմնականում ստորաբաժանումները ներառել են ընթացիկ ուսումնական գործընթացները, որոնք տեղի են ունենում տարեկան շրջափուլով: Այսպես օրինակ ամբիոնի երկարաժամկետ պլանում նշվում է ամբիոնի նիստերի անցկացումը: Միևնույն ժամանակ ՌԾ-ով սահմանված հետազոտական աշխատանքների իրականացման ուղղությամբ գործընթացների պլանավորման համար ուղղակի նշվում է գիտական հետազոտական աշխատանքների պլանավորում՝ տեսանելի չդարձնելով հստակ գործողությունները: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ամբիոնները հետևողական չեն նիստերի անցկացման հարցում: Ամբիոնների նիստերի իրականացումը դեռևս պարբերական բնույթ չի կրում՝ մեծապես կախված լինելով ամբիոնների վարիչների հայեցողությունից:

Ստորաբաժանումների 2019-2024թթ. համար նախատեսված երկարաժամկետ պլանավորման փաստաթղթերում որպես կատարման ցուցանիշ նշվում է հաշվետվությունը: Կարճաժամկետ պլանավորումն իրականացվում է ստորաբաժանումների տարեկան

[6] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

պլանների միջոցով: Հարկ է նշել, որ պլանավորված գործընթացները երբեմն չեն բխում ստորաբաժանումների գործառութային շրջանակից: Ուսումնական մասի աշխատանքային պլանում ներառված է պրակտիկաների կազմակերպում և անցկացում, իսկ պատասխանատու նշված է ուսումնական մասի վարիչը, սակայն ուսումնական մասի կանոնադրության մեջ պրակտիկայի կազմակերպում ներառված չէ, միևնույն ժամանակ այս գործընթացը ամբողջությամբ պետք է իրականացնի պրակտիկայի և կարիերայի բաժինը:

Քոլեջը մշակել է ներքին և արտաքին գործոնների ազդեցության և ռիսկերի վերհանման քաղաքականություն: Այն նախատեսում է ինչպես արտաքին, այնպես էլ քոլեջի գործունեության ներքին սոցիալական գործոնների հաշվառումը: Ներքին սոցիալական գործոններից «ղեկավար կազմի և աշխատակազմի կոմպետենտության մակարդակի» և «աշխատակիցների սոցիալական աջակցության համակարգի ստեղծման» ուղղությամբ ՄՈՒՀ-ը տեսանելի քայլեր չի իրականացրել, իսկ «աշխատակիցների խրախուսման համակարգի առկայության», «աշխատակիցների որակավորումների բարձրացման համակարգերի առկայության և ապահովման» ուղղությամբ մշակվել և ընդունվել են ընթացակարգեր, որոնք իրենց հերթին էական բարելավումների հիմք չեն հանդիսացել (օրինակ՝ «Դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման» կարգի համաձայն քոլեջը դեռևս չի իրականացրել դասախոսական անձնակազմի ներքին վերպատրաստումներ, իսկ գործող խրախուսման ընթացակարգերը չեն հաշվառում օրինակ դասախոսի հետազոտական գործունեությունը, որը քոլեջի ռազմավարական ուղղություններից մեկն է)[7]:

Քոլեջն իրականացրել է նաև 2016-2019 տարիների գործունեության SWOT վերլուծություն, որը թույլ է տվել վեր հանել քոլեջի առաքելության իրականացման համար ռիսկային կողմերը, այնուհետ մշակել նոր 2019-2024թթ. ԶՌԾ-ն և պլան ժամանակացույցը, գնահատման ցուցիչները: 2016-2019թթ. գործընթացների վերլուծությունը հիմք է հանդիսացել նաև մի շարք փաստաթղթերի բարելավման և ստեղծման համար: Այս նպատակով ՄՈՒՀ-ը ներդրել է որակի ապահովման միասնական քաղաքականություն, ստեղծվել են համապատասխան աշխատանքային խմբեր ամբիոնների վարիչների, դասախոսների, ուսանողների ներգրավվածությամբ: Փաստաթղթային հենքի վերանայումը հիմնված է գնահատման և բարելավման շրջափուլերի վրա: Փաստաթղթերի ուսումնասիրությունը և փորձագիտական այցը ցույց տվեցին, որ վերանայման են ենթարկվել քոլեջի հիմնական փաստաթղթերը, ստեղծվել են պաշտոնի անձնագրեր, քաղաքականություններ և ընթացակարգեր: Ներկայումս մի շարք փաստաթղթեր ներդրման փուլում են, և դրանց գործածման արդյունքները քոլեջի կողմից դեռևս չեն գնահատվել:

ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և մշտադիտարկման համար քոլեջում առկա մեխանիզմներ են դասալսումները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունները, ՈԱԲ հարցումները (օրինակ՝ Ուսանողների բավարարվածության հարցումներ), սակայն բոլոր

[7] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

գործընթացների արդյունավետության վերաբերյալ հստակ պարբերականություն ունեցող հարցումներ ՄՈՒՀ-ը չի իրականացրել: Սկսած 2020-2021 ուստարվանից իրականացվել է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների վերլուծություն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ստացվող տվյալները և դրանց վերլուծության արդյունքներն անդուհանդերձ ոչ միշտ են դրվել գործընթացների լավարկման հիմքում[8]:

Քոլեջի կողմից իրականացվող գործունեության թափանցիկության ապահովման, արտաքին և ներքին շահակիցներին իրազեկման նպատակով ամբողջովին արդիականացվել է քոլեջի պաշտոնական վեբ կայքը՝ www.grigoris.am: Քոլեջում իրականացվող բարեփոխումների շրջանակում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հրապարակումների մեխանիզմների արդյունավետության գնահատումը դեռևս պլանավորման փուլում է, մասնավորապես նախատեսվում է կազմակերպել գործատուների հետ հանդիպումներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կառուցվածքային բարեփոխումները, ստորաբաժանումների համար աշխատանքային ընթացակարգերի մշակումը և ներդնումը, պաշտոնի անձնագրերի մշակումը և գործառույթների սահմանումը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ այս փաստաթղթերը դեռևս ներդրման փուլում են: Դրանց լիարժեք ներդնումը կնպաստի կառավարման գործընթացների կանոնակարգմանը: Քոլեջն իր կառուցվածքում ներառում է 5 ամբիոններ, որոնք ստեղծված են ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար: Այնուամենայնիվ, ամբիոնները որպես ուսումնամեթոդական օղակ չունեն առանձնացված տարածքներ, ինչը հանգեցրել է նրան, որ ուսանողները լիարժեք չեն ընկալում ամբիոնի դերակատարությունը՝ հաճախ ամբիոնը ընդհանրացնելով ուսումնական մասի հետ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարման կառուցվածքի փոփոխությունների լիարժեք գործարկման համար քոլեջին անհրաժեշտ է ռեսուրսների բարելավում, ինչը թույլ կտա համակարգել աշխատանքները և ամբիոնների դերն ընկալելի դարձնել ներքին և արտաքին շահակիցների համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի հիմնադրի ջանքները կրթության կազմակերպման և անհրաժեշտ բարեփոխումները իրականացնելու համար, ինչը նպաստում է բարեփոխումների իրականացմանը, իսկ վարչական աշխատակիցների հետ սերտ համագործակցությունը նպաստում է թիմային աշխատանքին: Փորձագիտական խմբի մտահոգիչ է համարում, որ ներքին շահակիցները հաճախ չեն բարձրաձայնում խնդիրների մասին՝ վստահ լինելով, որ հիմնադիրը քաջատեղյակ է դրանց, ուստի հնարավորության սահմաններում դրանք կլուծվեն: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է տնօրենի գործունեության ակտիվացումը կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման և հաստատության շարունակական զարգացման համար:

[8] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

Դրական է, որ հաշվի առնելով ռազմավարական առաջնահերթությունները՝ քոլեջն իր կառուցվածքում ներառել է արտաքին կապերի բաժինը (2019թ.), սակայն մինչ օրս բաժինը համալրված չէ աշխատակցով: Քոլեջի հիմնադիրն ունի գործուն դերակատարություն գործընկերների հետ համագործակցության շրջանակների ստեղծման հարցում, սակայն հաշվի առնելով քոլեջի միջազգայանացման ռազմավարական հավակնությունները, մտահոգիչ է, որ աշխատանքները կիսում են տարբեր բաժինների պատասխանատուները, այդ թվում Արտաքին բաժնի կանոնադրությունը սահմանում է միայն արտերկրյա գործընկերների հետ փոխհարաբերությունների հաստատումը, թեև քոլեջը ունի բազմաթիվ տեղական գործընկերներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին կապերի բաժնի գործընթացների և պատասխանատվությունների հստակեցումը կնպաստի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների լիարժեք իրագործմանը:

Դրական է, որ քոլեջը աշխատանքներ է իրականացրել քոլեջի տարբեր գործընթացների բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝ պլանավորումը փոխկապակցելու ԶՌԾ-ի հետ: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ստորաբաժանումները դեռևս լիարժեք չեն տիրապետում միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորմանը, ինչը կարող է վտանգել քոլեջի զարգացումը: Պլանավորման գործընթացների բովանդակային լավարկումը կնպաստի ՄՈՒՀ-ի ՌԾ կատարողական արդյունքների բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ղեկավար անձնակազմի և դասախոսական կազմի միջև ձևավորված համագործակցային միջավայրը: Քոլեջում կառուցածքային փոփոխությունները հանգեցրել են բաժնի ղեկավարների գործառույթների հստակեցման, որին առավելապես նպաստել է պաշտոնի անձնագրերի ներդնումը, սակայն գործընթացների ուսումնասիրությունը և փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցների հետ հանդիպումները վերհանեցին կառավարիչների գործառույթների կրկնության, 2 և ավել անձերի վրա պարտականությունների բաշխման հետևանքով գործընթացների ոչ համակարգված իրականացման դեպքեր: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը առաջիկայում պետք է գնահատի իր գործունեության ոլորտներին համապատասխան նշանակված պատասխանատուների իրական գործառույթները և անհրաժեշտության դեպքում շտկումներ կատարի պաշտոնի անձնագրերում՝ սահմանելով հստակ պարտականություններ: ՈԱ պատասխանտուին վերապահված վերահսկման պարտականությունները պետք է աստիճանաբար դառնան ինստիտուցիոնալ գործիք, որը պետք է արտահայտվի հաշվետվողականության վերևից ներքև, ներքևից վերև կապերով: Հաշվետվողականության համակարգի բարելավումը հնարավորություն կտա ամրապնդելու կառավարման օղակների միջև ուղղահայաց և հորիզոնական կապերը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը կառավարման օղակներում, սակայն դեռևս առկա չեն օբյեկտիվ փաստեր նրանց ակտիվ դերակատարության վերաբերյալ: Քոլեջի կողմից շահակիցների նախաձեռնողականության խթանման մեխանիզմների ներդնումը լրացուցիչ հիմքեր կստեղծի կարիքների բարձրաձայնման և կրթական միջավայրի բարելավման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին գործոնների ազդեցության և ռիսկերի վերհանման քաղաքականության առկայությունը, ինչը կարևոր դերակատարություն է ունեցել նոր ԶՌԾ-ի մշակման համար, նպատակ ունենալով սահմանել ռազմավարական առաջնահերթությունները և բարելավել քոլեջի թույլ կողմերը: Փորձագիտական խումբը կարևորում է գործընթացների համաչափ ընթացքի ապահովումը, ինչը թույլ կտա համաժամանակյա կանխել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռիսկերը: Քոլեջի ներքին և արտաքին միջավայրի շարունակական ուսումնասիրությունը հնարավորություն կտա մշտադիտարկել ազդեցության գործոնները: Կարևոր է ըստ պլանների հաշվետվողականության ապահովումը՝ մշտադիտարկելու իրականացված գործընթացների արդյունքները և բացահայտելու բարելավման ենթակա ուղղությունները:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության ընթացքը, կարևոր է, որ տեսանելի է ՊԻԳԲ շրջափուլի ապահովումը փաստաթղթերի վերանայման ընթացքում, ինչը դրական նախադրյալներ է ստեղծում գործընթացների որակի կառավարման սկզբունքով իրականացման համար: Բացի փաստաթղթային վարչարարությունից ՄՈՒՀ-ը պետք է հստակեցնի ներքին շահակիցների ընկալումները՝ նպաստելով կառավարման գործառնական կապերի բարելավմանը, գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում կառավարման գործընթացները լիովին կանոնակարգված չեն, կառավարչական որոշումները չեն կայացվում կոլեգիալ և միանձնյա կառավարման զուգակցմամբ, պատասխանատվությունների շրջանակը հստակեցված չէ, ֆինանսների և ռեսուրսային բազայի ընդլայնման հնարավորությունները սահմանափակ են, դեռևս թույլ են պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմները, ներքին շահակիցներին ներգրավվելու գործիքները խիստ սահմանափակ են, դասախոսները և ուսանողները ոչ բավարար և ոչ թիրախային են մասնակցում որոշումների կայացմանը, գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները թույլ են՝ փորձագիտական խումբը գտնում է, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջը Որակավորումների ազգային շրջանակի հինգերորդ մակարդակում իրականացնում է 4 կրթական ծրագիր՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքով՝ «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» մասնագիտություններով: Մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայվել են 2021թ., ինչը պայմանավորված է եղել ինչպես ՊԿՉ մոդուլային ծրագրերի ներդրման անհրաժեշտությամբ, այնպես էլ ՄՈՒՀ-ում մեկնարկած բարեփոխումներով: Արդյունքում ներդրվել են նոր ձևաչափով մշակված կրթական ծրագրերը: ՄԿԾ մասնագրերում ներկայացված է ծրագրի կառուցվածքը և ընդհանուր նկարագիրը, մասնագիտական գործունեության նկարագիրը, ներկայացված են ԿԾ վերջնարդյունքները, ԿԾ իրականացման նկատմամբ պահանջները, ներկայացված են մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսի որակավորման նկատմամբ պահանջները, լաբորատորիաների և ռեսուրսների ցանկը, ԿԾ-ի պրակտիկաների և ամփոփիչ ատեստավորման իրականացման և կազմակերպման պահանջները, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, պլանը, մոդուլների վերջնարդյունքների ձևավորման, ԿԾ վերջնարդյունքների և ՈԱԾ-ի համադրելիության քարտեզագրումները:

Չնայած կատարված ծավալուն աշխատանքներին՝ դեռևս առկա են անճշտություններ, օրինակ ՄԿԾ փաթեթում կցված ուսումնական պլանների և գործող ուսումնական պլանների միջև («Ընդհանուր դեղաբանություն» տրված է 6-րդ կիսամյակում, 5-րդի փոխարեն և այլն), իսկ ՈԱԾ-ի հետ համապատասխանության քարտեզագրումը չի արտահայտում իրական պատկերը: Մշակված ՄԿԾ վերջնարդյունքները բաժանված են 3 խմբերի՝ 1-ին՝ ընդհանրական և առանցքային, 2-րդ՝ մասնագիտական և 3-րդ՝ ընդհանուր և հատուկ մասնագիտական, սակայն այս տարանջատումը հստակ չէ: Մասնագիտականը բաժանվում է ընդհանուր մասնագիտականի և հատուկ մասնագիտականի, սակայն վերջնարդյունքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք հիերարխիկ կապվածություն չունեն, իսկ որպես մասնագիտական վերջնարդյունք սահմանվել է Օրինակ՝ Ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն («Դեղագործության» մասնագիտական վերջնարդյունք կետ 6.): Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄԿԾ վերջնարդյունքերը չեն արտահայտում ուսանողի (շրջանավարտի) մասնագիտական առանցքային կարողությունները և հմտությունները: Նաև պարզ դարձավ, որ ընդհանուր և հատուկ մասնագիտական վերջնարդյունքները ձևավորվել են առարկաների և մոդուլների վերջնարդյունքներից՝ առանց խմբավորելու և ամփոփելու: Կան դեպքեր, երբ ՄԿԾ վերջնարդյունքը («Սրտանոթային, ավշային, շնչառական և միզային համակարգի անատոմիական կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ գիտելիքների և դրանք

գործնականում կիրառելու կարողությունների ձևավորում») համընկնում է մոդուլի անվանման հետ («Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով, սրտանոթային, ավշային, շնչառական և միզային համակարգերի կառուցվածքը և գործառույթները»): ՄԿԾ-ներն ունեն սահմանված վերջնարդյունքների շատ մեծ շրջանակ՝ պայմանավորված մասնագիտական մոդուլների քանակով, օրինակ «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրում ներկայացված են 13 ընդհանրական և առանցքային, 9 մասնագիտական և 46 ընդհանուր և հատուկ մասնագիտական վերջնարդյունքներ: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար առկա են 15 ընդհանրական և առանցքային, 10 մասնագիտական և 13 ընդհանուր և հատուկ մասնագիտական վերջնարդյունքներ, «Դեղագործություն» մասնագիտության համար՝ 13 ընդհանրական և առանցքային, 9 մասնագիտական և 19 ընդհանուր և հատուկ մասնագիտական վերջնարդյունքներ, ինչը դժվարին է դարձնում դրանց օբյեկտիվ չափելիությունը[9]:

Կրթական ծրագրերն իրականացվում են տնօրենի կողմից հաստատված ուսումնական պլանների համաձայն: Ուսումնական պլաններում առարկաների և մոդուլների դասաժամերի բաշխման ժամանակ առաջնահերթությունը տրվել է գործնական պարապմունքներին, հիմնականում պահպանվել են առարկաների տրամաբանական հաջորդականությունը և մոդուլների մուտքային պահանջները: Ուսումնական պլաններով նախատեսված են ընտրովի առարկաների համար դասաժամեր, սակայն նշված չեն առարկաների անվանումները: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջն իր նախաձեռնությամբ է դրանք ընտրում, նաև առկա չէ ընտրովի առարկաների ցանկ, և ուսանողներին չի տրվում իրենց մասնագիտական հետքրքրությունների շրջանակում ընտրելու հնարավորություն[10]:

ՄՈՒՀ-ը կարևորում է ուսանողակենտրոն ուսուցումը, ուսումնական գործընթացում դասավանդման տարատեսակ մեթոդների կիրառումը և մեթոդների ընտրության հարցում վերջնարդյունքահենք մոտեցումը: Այսուհանդերձ, փորձագիտական խմբի կատարած դասալսումները ցույց տվեցին, որ դասերը հաճախ ընթանում են դասախոսակենտրոն, ավանդական դասավանդման մեթոդներով: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ը դեռևս չունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն: Առարկայական նկարագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդները համընդհանուր են բոլոր ՈՒԱ վերջնարդյունքների համար: Դասավանդման մեթոդներում առանձնացվում են դասախոսությունը և գործնական աշխատանքները, սակայն չեն կարևորվում լաբորատոր աշխատանքները մասնագետի հմտություններ ձեռք բերելու և ուսումնառելու գործում, օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» և «Դեղագործություն» մասնագիտությունների համար:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքում վերհանվում են դասավանդման մեթոդների վերանայման խնդիրները և փորձում են ուղղորդել դասախոսներին կիրառելու ինտերակտիվ մեթոդներ, սակայն դասախոսներն

[9] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:
[10] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

ուսումնառության նյութը հիմնականում տրամադրում են թելադրման մեթոդով հատկապես մասնագիտական առարկաների շրջանակներում, երբեմն ուսանողներին տրվում են օգտակար հղումներ և լրացուցիչ գրականություն ուսումնասիրության համար: Որոշ դիդակտիկ տեսանյութեր տրամադրվում են ուսանողներին սոցիալական հարթակում ստեղծված խմբերի միջոցով: Միևնույն ժամանակ, պարզ դարձավ, որ քոլեջում չկա ուսումնառության նյութերի և հանձնարարությունների համակարգված բազա: Հարկ է նշել, որ ամբիոնի վարիչների կողմից չկան սահմանված պահանջներ դասավանդվող առարկայի ուսումնառության նյութերի մշակման և ամբիոնում պահպանման համար:

Ուսանողներին տրվող հանձնարարականների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսները հաճախ հանձնարարում են ռեֆերատներ և ինքնուրույն աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել հետազոտական-վերլուծական բաղադրիչի կիրառությունը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ռեֆերատները և ինքնուրույն աշխատանքները կատարվում են բոլոր առարկաների և մոդուլների շրջանակներում, և դրանց կատարումն իր ազդեցությունն է ունենում վերջնական գնահատականի վրա: Գնահատման համար պարտադիր բաղադրիչների մեջ մտնում է նաև ռեֆերատի ներկայացումը, սակայն ուսանողների ինքնուրույն աշխատանքի բեռնվածությունը որևէ կերպ չի հաշվառվում ՄՈՒՀ-ի կողմից, ինչպես նաև այս աշխատանքների գնահատման համար առանձին բաղադրիչ առանձնացված չէ: Ուսանողները կատարում են նաև կուրսային աշխատանքներ դասընթացների շրջանակում, սակայն այս աշխատանքների կատարումն ուսումնական պլանով նախատեսված չէ: Աշխատանքի թեմայի ընտրությունը կատարվում է դասախոսների կողմից, և չի համակարգվում ամբիոնների միջոցով: Ուսանողը կարող է իրականացնել կուրսային աշխատանք նաև ոչ մասնագիտական առարկաների շրջանակում:

Գործնական պարապմունքների ընթացքում դասախոսները կարևորում են իրավիճակային խնդիրների կիրառումը՝ ուսանողների մոտ կլինիկական մտածողության ձևավորման նպատակով: Հատուկ մասնագիտական մոդուլների դասերը հաճախ անցնում են անմիջապես բուժհաստատություններում (բժշկական ոլորտից ներգրավված դասախոսի աշխատավայրում):

Քոլեջում գործող տնօրինական խորհրդի և տնօրենի կողմից հաստատած «Ուսանողի գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կարգի համաձայն՝ կարգավորվում է առարկաների և մոդուլների ընթացիկ գնահատման և միջանկյալ ատեստավորման անցկացման ձևերի՝ ստուգարքների, տարբերակված ստուգարքների և քննությունների ընթացքը: Քոլեջում գնահատումն իրականացվում է 10 բալային համակարգով, որտեղ 1-3 բալն համարվում է անբավարար, 4-6-ը՝ բավարար, 7-8-ը՝ լավ, 9-10-ը՝ գերազանց, սակայն հաստատությունը չի սահմանել գնահատականի ձևավորման հստակ չափանիշներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում բարելավելու գնահատման համակարգը՝ բազմաբաղադրիչ համակարգ ներդնելով, ըստ որի 10 միավորը կձևավորվի հետևյալ կերպ. հաճախումներ՝ 2 միավոր, գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում՝ 5 միավոր և ինքնուրույն անհատական աշխատանք՝ 3 միավոր:

Քոլեջում գնահատման ընթացքում հաշվի են առնվում ուսանողի գիտելիքները, ունակությունները, կարողությունները, ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսումնառության արդյունքների գնահատման ժամանակ կիրառվում են գիտելիքների ստուգման բանավոր և գրավոր մեթոդները՝ կապված տվյալ առարկայի առանձնահատկության, դասախոսի կողմից գնահատման կոնկրետ ձևի ընտրության հետ: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ դասախոսները տեսական գիտելիքները գնահատում են հարց ու պատասխանի, թեստային առաջադրանքների և ռեֆերատների միջոցով: Ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների գնահատումը դեռևս հստակ գործիքակազմ չունի:

«Ուսանողի գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կարգի համաձայն դասընթացի գնահատման բաղադրիչ է նաև ուսանողի ներկայությունը (բացակայությունները): Անհարգելի բացակայությունների դեպքում ուսանողի ստացած ստուգարքային, քննական, պրակտիկայի գնահատականից հանվում են միավորներ, սակայն հստակ չէ գնահատականի նվազեցման մեխանիզմը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսները ոչ միշտ են հաշվառում և արձանագրում ուսանողների հաճախումները, իսկ քոլեջի անմիջական վերահսկումը ոչ միշտ է հնարավոր, քանի որ հատուկ մասնագիտական մոդուլների մեծամասնությունն անցկացվում է բուժհաստատություններում, միևնույն ժամանակ գործող գնահատման համակարգը հնարավորություն չի տալիս վերահսկելու ուսանողների հաճախումները:

Քոլեջում պրակտիկաները կազմակերպվում և անցկացվում են՝ ըստ սահմանված ժամանակացույցի քոլեջում գործող կարգի համաձայն: Քոլեջը համագործակցում է մի շարք հաստատությունների հետ պրակտիկայի կազմակերպման նպատակով, առաջիկայում ՄՈՒՀ-ը պլանավորում է ընդլայնել համագործակցության շրջանակները: Պրակտիկաների ընթացքը վերահսկում են քոլեջի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարները: Պրակտիկաների ծրագրերի ուսումնասիությունը ցույց տվեց, որ ծրագրում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդները ոչ միշտ են հանգեցնում ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը: Օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագի-տության N2 պրակտիկայի ծրագրի համաձայն՝ այն պետք է ձևավորի հետևյալ վերջնարդյունքը՝ «դրոշմի գնահատման, կոմբինացված մոդելների և մոմե թասակների պատրաստման տեխնիկայի, մոմե կոնստրուկցիան մետաղական կոնստրուկցիայի փոխարինման տիրապետում», որն ապահովող դասավանդման և ուսումնառության մեթոդներ են դիտարկում «դասախոսությունների կիրառումը, քննարկումների և բանավեճերի կազմակերպումը, իրավիճակային խնդիրների լուծումը, բացատրական, ցուցադրական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը»:

ՄՈՒՀ-ը պրակտիկաների գնահատման արդյունավետության բարձրացման նպատակով մշակել և փորձնական ներդրել է «Պրակտիկայի թղթապանակը», որն իր մեջ ներառում է պրակտիկայի օրագիրը, տարատեսակ հանձնարարություններ և առաջադրանքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկայի օրագրերը հիմնականում լրացվում են պրակտիկայի ավարտից հետո, միևնույն ժամանակ ուսանողները

բարձր են գնահատում պրակտիկաների արդյունավետությունը: Պրակտիկայի գնահատումն իրականացվում է հետևյալ բաղադրիչների հաշվառմամբ՝ մասնակցությունը պրակտիկային, կազմած հաշվետվության որակը և բովանդակությունը, ինքուրունությունը և ակտիվությունը, սակայն պարզ չէ բաղադրիչների համամասնության արժեքը գնահատականի ձևավորման մեջ:

Քոլեջն ուսանողների պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացնում է համապատասխան կարգի համաձայն: Պետական որակավորող հանձնաժողովը նախագահում է տվյալ ոլորտի հրավիրված արտաքին շահակիցը: Ամփոփիչ ատեստավորման քննության ժամանակ ստուգվում են ուսանողների ինչպես տեսական, այնպես էլ գործնական հմտությունները: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է 2 համալիր միջմոդուլային քննությամբ՝ «Ատամնատեխնիկական նյութագիտություն և անշարժ պրոթեզների պատրաստման տեխնիկա» և «Շարժական և բյուգելային պրոթեզների պատրաստման տեխնիկա»: «Դեղագործություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորումը ևս իրականացվում է 2 համալիր միջմոդուլային քննությամբ՝ «Դեղաձևերի տեխնոլոգիա», «Ֆարմակագնոզիա» և «Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա», «Մասնավոր դեղաբանություն» մոդուլներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները պետական ամփոփիչ ատեստավորմանը ներկայացնում են նաև տարվա ընթացքում իրենց պատրաստած աշխատանքները: Ամփոփիչ ատեստավորման քննատոմսերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տրված չեն հարցերի կշիռները, կան ծավալուն հարցեր, որոնք պահանջում են ընդգրկուն պատասխաններ, ինչպես նաև քննատոմսերն ունեն տարբեր բարդության աստիճաններ:

Քոլեջը փորձ է արել ներդնել ավարտական աշխատանքների կատարումը որպես ամփոփիչ ատեստավորման այլընտրանք, որի համար նաև մշակվել է ավարտական աշխատանքների կատարման կարգ: 2021-2022 ուստարում 2 ուսանող կատարել են ավարտական աշխատանքներ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզաբանվեց, որ գործընթացը դեռևս լիարժեք կանոնակարգված չէ, հստակ չէ քննությունը ավարտական աշխատանքով փոխարինելու ընթացակարգը, քանի որ ուսանողները, ավարտական աշխատանք կատարելով հանդերձ, պետք է սահմանված 2 քննությունը հանձնեն: Միևնույն ժամանակ, ուսանողները լիարժեք չեն ընկալում ավարտական աշխատանքի կատարման դերը իրենց ամփոփիչ ատեստավորման ժամանակ՝ նշելով, որ այն կնպաստի բարձր գնահատականի ձևավորմանը, սակայն այս տեսանկյունից նույնպես քոլեջը կարգավորումներ չի կատարել, օրինակ թե ինչ մասնաբաժին ունի ավարտական աշխատանքը ամփոփիչ ատեստավորման ժամանակ:

ՄՈՒՀ-ն ունի ակադեմիական ազնվության կանոնակարգ, որտեղ նկարագրվում են ակադեմիական ազնվության խախտման դեպքերը, որի անմիջական վերահսկողությունը ուսանողների աշխատանքների նկատմամբ պետք է իրականացնի դասախոսը: Ակադեմիական ազնվության հայեցակարգին անդրադարձ կա քոլեջի դասալսումների կազմակերպման և անցկացման կարգում, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման կարգում:

ՈԱ պատասխանատուի կողմից աշխատանքներ են տարվում փաստաթղթի հասանելիությունը ուսանողների և դասախոսների շրջանում ապահովելու ուղղությամբ՝ պարբերաբար կազմակերպվող իրազեկման աշխատանքների, սեմինարների և քննարկումների միջոցով: Գնահատման օբյեկտիվության տեսանկյունից քոլեջը կարևորում է ակադեմիական ազնվության ապահովումը, քննությունների արդյունքների բողոքարկման մեխանիզմների ստեղծումը: Ուսանողների կողմից կատարված տարբեր բնույթի աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կան դեպքեր, երբ չկա նշված օգտագործված գրականության ցանկ, տեքստում չկան աղբյուրներին կատարված հղումներ և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատականների բողոքարկման դեպքեր հազվադեպ են լինում:

Քոլեջն ունի մշակած բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ (2019թ.), սակայն դեռևս ընթացակարգը գործունեության մեջ չի դրվել, մասնավորապես առկա չէ ՄԿԾ-երի բենչմարքինգ կամ այլ հաստատությունների հետ համեմատական վերլուծություն: Այսուհանդերձ, ՌԴ-ի «Մոսկվայի պետական բժշկական քոլեջի» և Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի», Էստոնիայի Հանրապետության «Վալգայի մասնագիտական ուսումնական կենտրոնի» հետ աշխատանքներ են տարվում միտված ուսանողների ու դասավանդողների շարժունությանը: Պայմանագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միայն Բելառուսի Հանրապետության քոլեջի հետ պայամանագրում կա շարժունության վերաբերյալ դրույթ: Վերոնշյալը հիմնավորվեց նաև փորձագիտական այցի ընթացքում. 2023թ. նախատեսվում է փոխանակում իրականացնել «Քույրական գործ» մասնագիտության ուսանողների համար՝ նախնական պայմանավորվածությունների համաձայն:

Քոլեջն ունի «Կրթական ծրագրերի ընթացիկ վերանայման և մշտադիտարկման ընթացակարգ», ըստ որի վերանայումը նախատեսվում է իրականացնել 2-4 տարին մեկ անգամ: 2021թ. ներդրված նոր ՄԿԾ-ները դեռևս ընթացքի մեջ են, արդյունքների միջանկյալ մշտադիտարկում քոլեջը չի իրականացրել: Քոլեջը թեև ունի ՄԿԾ մշտադիտարկմանը նպաստող որոշ մեխանիզմներ՝ ներքին և արտաքին շահակիցների հետ հարցումներ, փոխադարձ դասալսումներ, վարպետաց, ցուցադրական, ստուգողական և բաց դասերի կազմակերպում ու անցկացում, պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների վերաբերյալ քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ, սակայն գործող մեխանիզմների արդյունքում ամփոփ վերլուծություններ դեռևս չեն կատարվել: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի արդյունավետության գնահատումը նախատեսվում է իրականացնել ծրագրերի շրջափուլի ավարտին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման գործընթացը, որի արդյունքում ձևավորվել և ներդրվել են նոր ձևաչափով մշակված կրթական ծրագրերը, որոնցում ներառված են ՄԿԾ վերջնարդյունքները: Այդուհանդերձ խնդրահարույց է այն հանգամանքը, որ մասնագիտական

վերջնարդյունքները փոխկապակցված չեն տվյալ մասնագիտությանը ներկայացվող պահանջների հետ, այլ արտացոլում են առարկաների և մոդուլների ուսումնառության ակնկալվող արդյունքները: Ըստ էության նման մոտեցումը հանգեցրել է նրան, որ ՄԿԾ-ների համար ձևավորվել են չափից շատ վերջնարդյունքներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ վերջնարդյուքները հստակեցման և համակարգման կարիք ունեն, որը թույլ կտա օբյեկտիվ գնահատել շնորհվող որոկավորումների արժանահավատությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ուսումնական պլանով ընտրովի առարկաների համար հատկացված են ժամեր, սակայն նշված չեն առարկաների անվանումները: Առարկաների հստակեցումը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցմանը և ուսումնական գործընթացում ուսանողների ներգրավվածությանը: Փորձագիտական խումբը դրական է համարում դասավանդման մեթոդների բազմազանեցման և ինտերակտիվ մեթոդների ներդրման ջանքերը, սակայն դեռևս արդյունքները տեսանելի չեն, իսկ թելադրության մեթոդով դասերի անցակցումը բերում է դասաժամի ոչ արդյունավետ օգտագործմանը: ՄՈՒՀ-ը դեռևս չունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն, ինչը խոչընդոտում է դասավանդման արդյունավետությանը և մեթոդների բարելավմանն ուղղված գործընթացին: Նշված քաղաքականության մշակումը և ներդնումը կնպաստի քոլեջում ուսանողակենտրոն ուսումնառությանը և ինտերակտիվ մեթոդների ինստիտուցիոնալ մակարդակում ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ դասախոսները լրացուցիչ գրականության, էլեկտրոնային աղբյուրների, մասնագիտական տեսանյութերի ուսումնասիրության միջոցով նպաստում են ուսանողների մոտ հետազոտական-վերլուծական կարողությունների ձևավորմանը, սակայն մտահոգիչ է, որ մոդուլների և առարկաների համար դասավանդման և ուսումնառության նյութերը, դասախոսությունների փաթեթները չեն պահպանվում ամբիոններում, ինչը խոչընդոտում է ուսումնական գործընթացի շարունակաբար բարելավմանը և փորձի փոխանակմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերն ուսանողներին տրվող հանձնարարականների բազմազանեցման գործում: Այդուհանդերձ մտահոգիչ է, որ չի հաշվառվում տրվող հանձնարարականների քանակը, ինչը կարող է հանգեցնել ուսանողի ինքնուրույն աշխատանքներով գերբեռնվածության, որն իր հերթին կարող է անդրադառնալ ռեֆերատների և այլ աշխատանքների կատարման որակի վրա: Հարկ է նշել, որ կատարած ռեֆերատները և ինքնուրույն աշխատանքները դրական ազդեցություն են ունենում ուսանողների առաջադիմության վրա, սակայն փորձագիտական խմբի գնահատմամբ դրանց միավորային կշիռների ճշգրտումն էականորեն կբարձրացնի գնահատման համակարգի արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է գնահատման և բողոքարկման կարգի առկայությունը, որը որոշակիորեն կանոնակարգում է գնահատման գործընթացը, սակայն առկա չէ գնահատման չափանիշների հստակ բնորոշում, որը թույլ կտար դասախոսներին ցուցաբերել օբյեկտիվ և միասնական մոտեցումներ: Դրական է, որ տեսական գիտելիքների

ստուգման ձևերը կանոնակարգված են, սակայն գործնական կարողությունների և հմտությունների գնահատման մեխանիզմները դեռևս ունեն բարելավման կարիք։ Հարկ է նշել, որ ուսանողների հաճախումների հաշվառման, վերահսկման և բաց թողնված թեմաների լրացման մեխանիզմների անկատարությունը կարող է խոչընդոտել ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում պրակտիկաների կազմակերպման և անցկացման համար ձևավորված գործատուների հստակ շրջանակը բոլոր մասնագիտությունների համար։ Դրական է նաև, որ որոշակիորեն բարելավվել է պրակտիկայի գնահատման գործիքակազմը, այնուամենայնիվ գնահատման համակարգի անկատարությունը անդրադառնում է նաև պրակտիկաների գնահատման համար ներդրված բաղադրիչների արդյունավետ կիրառության վրա։ Քոլեջը դեռևս անելիքներ ունի պրակտիկաների վերահսկման մեխանիզմների արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչը կնպաստի պրակտիկ կարողությունների ձևավորմանը և մասնագիտական ոլորտում քոլեջի շրջանավարտների պահանջարկի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում ամփոփիչ ատեստավորման քննություններին արտաքին շահակիցների ներգրավված լինելը, գործընթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունը։ Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի գնահատմամբ քննատոմսերում ներառված հարցերի բարդությունների բաշխումը, գնահատման սանդղակների հստակեցումը գնահատականների օբյեկտիվության ապահովման երաշխիքներ կստեղծեն։

Հարկ է նշել, որ քոլեջը դեռևս չունի հստակ ընթացակարգ, որը թույլ կտա փոխարինել ամփոփիչ ատեստավորման քննությունը ավարտական աշխատանքով, հստակ ընթացակարգերի բացակայության պայմաններում ավարտական աշխատանքների կատարումը դառնում է ինքնանպատակ և ավելորդ բեռնվածություն ուսանողների համար։ Քոլեջը պետք է անհրաժեշտ գնահատում իրականացնի, թե որքանով է նպատակային ատեստավորման քննություններից մեկը փոխարինել ավարտական աշխատանքով՝ հաշվի առնելով նաև ՄԿԾ վերջնարդյունքերի ձեռքբերումը գնահատելու հնարավորությունները, այլապես այդ գործընթացը կարող է վտանգել շնորհվող որակավորումների արժանահավատությունը։

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում ակադեմիական ազնվության կարգի մշակումը, որը սակայն պրակտիկայում դեռևս չի նպաստում ուսանողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվության պահպանմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ՄԿԾ-ների՝ համանման այլ կրթական ծրագրերի հետ համադրելիության ապահովման տեսանկյունից կարևոր է համապարփակ բենչմարքինգի իրականացումը բոլոր մասնագիտությունների մակարդակում: Դրական հանգամանք է քոլեջում մշտադիտարկման ընթացակարգի առկայությունը, որը նախնական փուլում հիմք է հանդիսացել կրթական ծրագրերի բարելավման համար: Հարկ է նշել, որ ՄԿԾ իրականացումը մշտադիտարկող մեխանիզմների դեռևս ոչ լիարժեք գործարկումը

խոչընդոտում է ծրագրերի արդյունավետության վերաբերյալ օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվության հավաքագրումը, ուժեղ և թույլ կողմերի վերհանումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ մշտադիտարկման մեխանիզմների բարելավումը կնպաստի կրթական ծրագրերի շարունակական լավարկմանը և մրցունակ շրջանավարտների թողարկմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում ՄԿԾ վերջնարդյունքները լիարժեքորեն փոխկապակցված չեն մասնագիտություններին ներկայացվող պահանջներին, ընտրովի առարկաները հստակեցված չեն, բացակայում է ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը, համակարգված չեն ուսումնառության նյութերը և ուսանողներին տրվող հանձնարարականները, ներդրված չեն գնահատման համակարգի և ուսանողների հաճախումների վերահսկման հստակ չափանիշներ ու ակադեմիական ազնվության ապահովման ընթացակարգեր, բենչմարքինգի իրականացման և ՄԿԾ մշտադիտարկման գործընթացներն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրված չեն՝ փորձագիտական խումբը գտնում է, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը չի բավարարում չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Քոլեջում ուսանողների ընդունելության գործընթացները կարգավորվում են ինչպես ներքին հրամաններով, այնպես էլ ՀՀ պետական գերատեսչական մարմինների կողմից ընդունված նորմատիվ ակտերով: Քոլեջում ընդունելությունն իրականացվում է ընդունելու-թյան կարգի համաձայն: Ընդունող հանձնաժողովը ապահովում է ընդունելության գործընթացի կազմակերպումն ու անցկացումը՝ դիմորդներին տրամադրելով անհրաժեշտ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդատվությունը տրամադրվում է՝ ելնելով դիմորդների հետաքրքվածությունից:

Քոլեջում գործող Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականության և ընթացակարգի համաձայն՝ ուսանողական խորհրդի ներկայացուցիչներն մասնակցում են գովազդային արշավներին, այցելում են տարբեր դպրոցներ, ուսումնական հաստատություններ, բաժանում են բուկլետներ: Արտաքին շահակիցների հետ հանդիպման ժամանակ կարևորվեց գովազդային արշավի ակտիվացման հանգամանքը: Քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման

մեխանիզմներից են նաև քոլեջի ֆեյսբուքյան էջը, 2021-2022 ուստարվանից գործող կայքէջը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դիմորդները քոլեջի մասին առավելապես տեղեկանում են շրջանավարտներից, իսկ որոշ թվով դիմորդներ՝ սոցիալական հարթակներից:

ՄՈՒՀ-ում ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներն են անանուն հարցումները, հանդիպումներն ու քննարկումները: Հարցումներն իրականացվում են ուսումնական ռեսուրսներով ապահովվածության, նյութատեխնիկական բազայի վիճակի, կրթական ծրագրերի ու դասավանդման արդյունավետության վերաբերյալ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների կարիքները որոշակիորեն վերհանվում են ինչպես վերոնշյալ գործիքների կիրառման, այնպես էլ ամբիոնների վարիչների, ՈԱ պատասխանատուի և Ուսանողական խորհրդի հետ հանդիպումների միջոցով: Այդուհանդերձ, ուսանողները ոչ միշտ են նախաձեռնողական իրենց կրթական կարիքների վերհանման գործում: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ լուծվել են համակարգչային լսարանի առկայության, ջեռուցման և լսարանային ռեսուրսներին առնչվող խնդիրները: Ուսանողներն ընդգրկված են նաև կառավարման մարմիններում և խորհուրդներում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջարկություններ և խնդիրներ դեռևս չեն բարձրաձայնվել:

Քոլեջում 2021 թվականին հաստատվել է «Խորհրդատուների գործունեության կարգը»: Ըստ ինքնավերլուծության՝ հատուկ ժամանակացույցով ուսանողներին խորհրդատվություն են մատուցում մասնագիտական ամբիոններն ու ուսումնական մասը՝ քննաշրջանի նախաշեմին, պետական ամփոփիչ ատեստավորումից առաջ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդատուների ինստիտուտը ներդրման փուլում է, ուսանողների տեղեկացվածության մակարդակը դեռևս ցածր է խորհրդատվական ծառայությունների մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները բացակայությունների դեպքում բաց թողնված նյութերը լրացնում են դասապրոցեսի ընթացքում դասախոսի և ուսանողների աջակցությամբ: Օտար լեզուների իմացության բարձրացման կամ մասնագիտական լրացուցիչ պարապմունքներ քոլեջում չեն անցկացվում:

Ըստ ինքնավերլուծության՝ վարչական անձնակազմի կողմից ուսանողների հավելյալ օժանդակումը և ուղղորդումն իրականացվում է առանց որևէ ժամանակացույցի: Ուսանողները ցանկացած պահի անհատապես կամ խմբային կարող են դիմել վարչական աշխատակազմին: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողները դիմում են վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, սակայն առավել հաճախ իրենց խնդիրների կարգավորում են հիմնադրին կամ ՈԱ պատասխանատուին դիմելու միջոցով: Լրացուցիչ վարչական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատման նպատակով պարբերաբար կազմակերպվում են հարցումներ, ըստ որոնց օժանդակություն ստանալու նպատակով «Մասնագիտական կողմնորոշման հարցերով» դիմել է հարցվողների 78.9%-ը, իսկ «Սոցիալական հարցերով»՝ 26.3%-ը: Ըստ հարցումների արդյունքների՝ քոլեջը նախատեսում է մասնագիտական

ամբիոնների ուշադրությունն ուղղել դեպի տարատեսակ սոցիալական միջոցառումների ակտիվացմանը։

Ըստ ինքնավերլուծության՝ կարիերայի բաժնի պատասխանատուն՝ համաձայն գործող կանոնակարգի, ցանկացած դիմորդի տրամադրում է մասնագիտական կողմնորոշման ծառայություններ՝ մասնագիտական խորհրդատվությունների տեսքով։ Քոլեջի պրակտիկայի պատասխանատուն տեղեկացված է շրջանավարտների զբաղվածությունից քոլեջում անցկացվող հարցումների միջոցով, ըստ որոնց հարցվողների 45%-ը անցել են աշխատանքի (հիմնականում «Դեղագործություն» մասնագիտությունից), ուսումն ու աշխատանքը համատեղել են՝ 24.5%-ը, աշխատում են իրենց մասնագիտությամբ ուսանողների 42%-ը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախատեսվում է ավելի հաճախ հարցումների անցկացում շրջանավարտների շրջանում։ Շրջանավարտների ամբողջական և պարբերաբար թարմացվող բազա քոլեջը դեռևս չունի։ Քոլեջն իր ռազմավարական ծրագրում հստակ ամրագրել է կարիերային նպաստող նոր որակի ծառայությունների մատուցումը և մրցունակ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը։ Այս նպատակով քոլեջի կողմից իրականացվում են հանդիպումներ գործատուների ներգրավմամբ, ինքնակենսագրականների կազմման վերաբերյալ սեմինարներ։ Այդուհանդերձ, փորձագիտական խումբն արձանագրում է, որ իրականացվող միջոցառումները դեռևս չեն ընգրկում ուսանողական ողջ համակազմի կարիքները։

Քոլեջում հետազոտական աշխատանքներն արդյունավետ և համակարգված կազմակերպելու նպատակով մշակվել և ներդրվել են Ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականությունը, ըստ որի նախատեսվում է դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավումը հետազոտական և գիտամեթոդական աշխատանքներում, ինչպես նաև Միջին մասնագիտական կրթական ծրագրերի դասընթացներում հետազոտական աշխատանքների կատարման կարգը։

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողները գրեթե բոլոր առարկաներից կատարում են ռեֆերատիվ, ինքնուրույն, կուրսային և ավարտական աշխատանքներ, որոնք գնահատվում են ներկայացման միջոցով։ Սակայն ոչ բոլոր ռեֆերատիվ և ինքնուրույն աշխատանքներն են համապատասխանում ուսանողների ընտրած մասնագիտությանը։ Այսպես օրինակ, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ավարտական աշխատանքը վերաբերում էր զբոսաշրջությանը և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողներն իրենց ուսումնառության նյութերի վերաբերյալ նաև որոշակի ուսումնասիրություններ են իրականացնում հիվանդությունների, բուժման ձևերի, պացիենտների հետ աշխատանքի վերաբերյալ, որոնց արդյունքներն ամփոփվում են բաց դասերի միջոցով։ Հարկ է նշել, որ այս ուսումնասիրությունները դեռևս պարտադիր չեն բոլոր մասնագիտությունների և մոդուլների համար և հաճախ պայմանավորված են ուսանողների հետաքրքրություններով։

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում ուսանողների իրավունքների ներկայացման ու պաշտպանության իրականացման պատասխանատու մարմինն է Ուսանողական խորհուրդը։ Ուսանողական խորհրդին ֆինանսապես աջակցություն ցուցաբերում է տնօրինությունը՝

իրականացնելու հնգամյա աշխատանքային պլանով նախատեսված գործողությունները: Ուսանողական խորհուրդը մեծ ակտիվություն է ցուցաբերում վերջին տարիների ընթացքում: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողական խորհրդի աշխատանքներն ուղղված են հիմնականում միջոցառումների կազմակերպմանը: Անցկացվում են են նաև միջքոլեջային մրցույթներ (սպորտլանդիաներ): Ուսանողական խորհուրդը ձևավորել է երկու հանձնաժողով՝ ուսումնական և կառավարչական, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դրանք միտված են ուսանողնական խորհրդի աշխատանքները համակարգելուն: Ուսումնական հանձնաժողովին վերապահված են քոլեջի ուսումնական գործընթացներին և միջոցառումներին ուսանողների մասնակցության հարցերը, իսկ կառավարչականն ունի կազմակերպչական գործառույթներ: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ աշխատանքի բաժանումը դեռ չի հանգեցրել որևէ տեսանելի արդյունքի: Ուսանողական խորհուրդը որակի պատասխանատուին աջակցում է հարցումների անցկացման գործում: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ խորհուրդը ամբողջապես տեղեկացված չէ ուսանողների իրավունքներից և պարտականություններից, չի իրականացնում իրազեկման միջոցառումներ և որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին դեռ չի դիտարկվում: Ուսանողական խորհրդի նախագահը ընդգրկված է քոլեջում գործող խորհուրդներում, սակայն փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ դեռևս նոր առաջարկություններ և խնդիրներ չեն բարձրաձայնվել:

Քոլեջի ուսանողների կրթական, խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ գնահատումն իրականացվում է մի քանի եղանակներով՝ ներքին և արտաքին շահակիցների հարցումների, հանդիպում-քննարկումների միջոցով: Ըստ հարցումների և հանդիպումների արդյունքների վերլուծության՝ գրանցվել են նոր առաջարկություններ՝ պրակտիկաների ընթացակարգերի վերանայման, կուրսային և դիպլոմային աշխատանքների կանոնակարգման վերաբերյալ, որոնց արդյունքում մշակվել և ներդրվել են համապատասխան փաստաթղթեր՝ Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականություն, Պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ և այլն: Այսուհանդերձ, փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ առկա մեխանիզմների կիրառումը ոչ միշտ է հանգեցնում արմատական փոփոխությունների երբեմն ուսանողների ոչ նախաձեռնողական լինելու հանգամանքով պայմանավորված:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ընտրության, ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, ինչպես նաև գտնում է, որ դրանց արդյունավետության գնահատումը կնպաստի դրանց բազմազանեցմանը և առավել մեծաքանակ ուսանողների ընդունելությանն ու դիմորդների թվի կայուն աճին: Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ում կիրառվող ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների առկայությունը, քոլեջի պատրաստակամությունը ուսանողների կարիքներին արձագանքման տեսանկյունից, իսկ բոլոր ուսանողների կարիքների վերհանումն ընդգրկող և նախաձեռնողականությունը

խթանող համակարգի ներդնումը լրացուցիչ խթան կհանդիսանա ուսանողական համակազմի կրթական կարիքների վերհանման համար։

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ ուսանողները դասախոսներից ստանում են համապատասխան աջակցություն և խորհրդատվություն, իսկ քննությունների վերաբերյալ խորհրդատվությունների ակտիվացումը կնպաստի ուսանողների համապարփակ պատկերացման ձևավորմանը քննությունների անցկացման և գնահատման համակարգի վերաբերյալ։ Փորձագիտախան խումբը կարևորում է նաև բաց թողնված դասերի լրացման հնարավորությունների և լրացուցիչ պարապմունքների իրականացումը, ինչը հնարավորություն կտա ուսանողների կողմից ուսումնառության նյութերի ամբողջական յուրացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում կարիերայի կենտրոնի գործունեությունը, որն ուղղված է ուսանողների հետագա կարիերայի աջակցմանը, աշխատանքի տեղավորմանը։ Ինչպես նաև գտնում է, որ այս միջոցառումներին բոլոր ուսանողների ներգրավման կարիք կա, իսկ շրջանավարտների բազայի շարունակաբար թարմացումը և նրանց հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների ներդնումը կնպաստեն կրթական ծրագրերի խնդիրների վերհանմանը և արդյունավետության բարձրացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողների ներգրավումը հետազոտական-վերլուծական աշխատանքներում գրեթե բոլոր ուղղություններով՝ նպաստելով հետազոտության և ուսումնառության կապի ամրապնդմանը։

Դրական են գնահատվում «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Ուսանողական խորհրդի աշխատանքների ակտիվացումը և քոլեջի մշակութային կյանքին ներգրավումը։ Այդուհանդերձ, ՈւԽ-ն պետք է նախաձեռնողականություն ցուցաբերի ուսանողների իրավունքների պաշտպանության վստահելի մարմին դառնալու ուղղությամբ։ Փորձագիտական խմբի համար նկատելի հանգամանք է վերջին տարիներին ՄՈՒՀ-ում ներդրվող որակի ապահովման մեխանիզմների առկայությունը, ինչը լրացուցիչ հիմքեր է ձևավորում մատուցվող ծառայությունների և կատարված աշխատանքների գնահատման ու բարելավման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, քոլեջը քայլեր է իրականացնում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով, վարչական կազմը պատրաստակամ է ուսանողներին աջակցություն ցուցաբերել առաջացած խնդիրների դեպքում, ուսանողները որոշակիորեն ներգրավված են հետազոտական աշխատանքներում, ներդրված են ուսանողների կարիերային նպաստող որոշ ծառայություններ, ինչպես նաև առկա են մատուցվող ծառայությունների գնահատման գործիքներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջում ՊԴ կազմի համալրման և ընտրության գործընթացները կարգավորվում են Դասախոսական կազմի ընդունման և ազատման կանոնակարգով, պաշտոնի անձնագրերով և ՄՌԿ քաղաքականությամբ: ՄՌԿ և ընդհանուր բաժինը համակարգում է դասախոսների ընդունման և ազատման գործընթացները: Թափուր տեղերի համալրման մասին հայտարարությունները տեղադրվում են ՀՀ Կրթական տեղեկատվական ազգային կենտրոնի կողմից կառավարվող կրթական միասնական տեղեկատվական հարթակում, ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում: Դասախոսների ընդունումը իրականացվում է մրցութային կարգով՝ մինչդեռ փաստացի մրցույթ չի իրականացվել թափուր տեղի համար դիմած մեկ հավակնորդով պայմանավորված: 2022թ.-ից քոլեջը ընդունել է դասախոսների տարակարգը, որտեղ առանձնացվել են գիտական կոչումները և աստիճանները, սակայն դեռևս չունեն գիտական կոչում և աստիճան ունեցող դասավանդողներ: ՄՈՒՀ-ը կարևորում է պրակտիկ ոլորտից (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, դեղատներ) մասնագետների ներգրավումը՝ որպես դասախոսներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ամբիոնների վարիչները ներգրավված չեն դասախոսների ընտրության և համալրման հարցում, սակայն առկա են օրինակներ, երբ դասախոսները խորհուրդ են տալիս և երաշխավորում՝ նոր մասնագետներին ՄՈՒՀ-ում դասավանդելու համար:

ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմի ընտրությունը կատարվում է ըստ ՊԿՉ և ՄՈՒՀ-ի կողմից մշակված դասախոսների պաշտոնի անձնագրի պահանջների, որոնք սահմանում են ՊԴ կազմի կոմպետենցիաների շրջանակը: Իրականացվող 4 կրթական ծրագերին համապատասխան, դասախոսների ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է ըստ դասավանդվող մոդուլների/առարկաների ժամաքանակի, պրակտիկաների ղեկավարման: Դասախոսների բեռնվածության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կան դեպքեր, երբ դասախոսը դասավանդում է մինչև 10 առարկա, որոնք ունեն նեղ մասնագիտական բնույթ, միևնույն ժամանակ դասաբաշխմամբ և ծավալով նախատեսված չէ կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարումը, որը փաստացի իրականացնում են դասախոսները: Մինչդեռ դասախոսների աշխատավարձը ցածր է աշխատաշուկայում ընդունված միջին աշխատավարձի սահմանաչափից:

ՄՈՒՀ-ում առկա են որոշ մեխանիզմներ դասախոսների պարբերաբար գնահատման համար, օրինակ՝ դասալսումները և ՈԱ հարցումները: ՄՈՒՀ-ն ունի «Դասալսումների

կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ», որը նպատակ ունի կատարելագործելու դասախոսական կազմի մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը, ինչպես նաև վեր հանել դասախոսների կարիքները և դրանց տալ ուղղորդված լուծումներ: Քոլեջում ուսումնական գծով տնօրենի տեղակալի, ուսմասի վարիչի, ամբիոնների վարիչների ներգրավմամբ դասալսումներն ունեն համակարգային պլանավորված բնույթ՝ որպես ուսումնական գործընթացի վերահսկման և ՊԴ կազմի գնահատման մեխանիզմ, որի համար մշակվել է հատուկ ձևաթերթ: Դասալսումներն իրականացվում են նաև ոչ պլանային ձևով: Դասալսման արդյունքները հետագայում նաև քննարկվում են դասախոսների հետ, ինչպես նաև մանկավարժական խորհրդում: ՄՈՒՀ-ը վերլուծել է կատարված դասալսումների արդյունքները, դուրս են բերվել խնդրահարույց կողմերը, օրինակ դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառության խնդիրը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վելուծությունները չեն հանգեցնում դասախոսական կազմի վերապատրաստումների իրականացման:

ՈԱ բաժինը կազմակերպել և իրականացրել է Դասավանդման որակի և արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցում ուսանողների շրջանում, ըստ որի ուսանողների մեծամասնությունը գոհ է դասախոսների դասավանդման որակական և մանկավարժական ունակություններից: Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ նման գնահատումները ավելի շատ կրում են ֆորմալ բնույթ, քանի որ վերլուծությունների արդյուքները չեն նպաստում գործընթացների բարելավմանը, օրինակ՝ ուսանողները նշել են դասավանդման նյութերի և գրականության արդիականացման խնդիրը, որի ուղղությամբ քայլեր դեռևս տեսանելի չեն:

ՄՈՒՀ-ն ունի մշակված «Դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման» կարգ, որի համաձայն դասախոսական կազմը պարտադիր 5 տարին մեկ անգամ պետք է անցնի վերապատրաստում առարկայական, մասնագիտական և հետազոտական կարողությունների զարգացման համար: Դասախոսները մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի վերապատրաստումներին, ինչպես նաև բժշկական ոլորտի մասնագետներն անցնում են մասնագիտական վերապատրաստումներ իրենց այլ աշխատավայրերում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ը չի իրականացնում մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն, ինչպես նաև դասախոսների միջև դրական փորձի տարածման օրինակներ չկան: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ դասախոսները հնարավորության դեպքում հետամուտ են մասնակցելու վերապատրաստումների, սակայն վերապատրստման կարիքները վերհանող մեխանիզմներից դասալսումների և հարցումների արդյունքները դեռևս բարելավման գործիք չեն հանդիսանում:

ՄՈՒՀ-ն ունի «Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի գնահատման և խրախուսման կարգ», որը սակայն չի հատկորոշում դասախոսների գնահատման մեխանիզմները, այլ միայն ներկայացնում է խրախուսման չափանիշները և մեխանիզմները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը պարբերաբար մոտիվացնում է աշխատակիցներին նյութական և բարոյական խրախուսումների միջոցներով՝

պայմանավորված աշխատանքային պարտականությունները լավ կատարելով, ինչպես նաև քոլեջի ինքնավերլուծության աշխատանքներում ընդգրկվելով: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ի կողմից սահմանված խրախուսման գործիքակազմը դեռևս չի ներառում դասախոսական անձնակազմի մասնագիտական առաջխաղացմանը հանգեցնող գործընթացները:

2021թ. դրությամբ ՄՈՒՀ-ի դասախոսական կազմի 80%-ը հիմնական աշխատողներ են, համատեղությամբ՝ 20%, որոնց միջին տարիքը 35 տարեկան տարիքային խմբում է: Ընդ որում, ՄՈՒՀ-ը փորձում է ապահովել ՊԴ կազմի կայունությունը, այնուամենայնիվ առկա է կադրային հոսունություն, որը տեսանելի է ամբիոնների հաշվետվությունում, սակայն ՄՈՒՀ-ը չի վերլուծել ըստ տարիների դասախոսական անձնակազմի կայունության տվյալները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսներից շատերը սկսնակ են կամ դասավանդման քիչ փորձ ունեն: Չնայած ՄՈՒՀ-ը դեռևս չունի մենթորության ընթացակարգ, բայց և այնպես առկա են որոշակի տարրեր, օրինակ՝ դասալսումների միջոցով սկսնակ դասախոսներին անհրաժեշտության դեպքում ուղղորդում են և խորհրդատվություն տալիս դասավանդման մեթոդների բարելավման ուղղությամբ, կատարվում են նաև կրկնակի դասալսումներ բարելավման արդյունքը գնահատելու նպատակով:

Քոլեջում կան անհրաժեշտ վարչական աշխատակիցներ կրթական գործընթացի կազմակերպման համար: Աշխատանքային պարտականություններով գերբեռնվածության խնդիր փորձագիտական խումբը չի արձանագրել, մյուս կողմից ստորաբաժանումների գործունեության արդյունավետության վերլուծություն քոլեջը չի իրականացրել: Քոլեջի կառուցվածքով, դասախոսական և ուսանողական փոքրաթիվ համակազմով պայմանավորված ՄՈՒՀ-ը չունի ուսումնաօժանդակ աշխատակիցներ (լաբորանտ, գործավար), սակայն առկա է ամբիոնի լաբորանտի պաշտոնի անձնագիր, որով սահմանված գործառույթներն ըստ էության կատարում է ամբիոնի վարիչը: Ըստ հաստիքացուցակի՝ կա ուսումնական մասի վարիչի օգնական, ով նաև դասավանդում է քոլեջում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության և ընթացակարգերի համաձայն անհրաժեշտ որակավորումների առկայությամբ, ինչպես նաև դասավանդման գործընթացում պրակտիկ ոլորտից մասնագետների ներգրավման աշխատանքները, ինչը որոշակիորեն նպաստում է բժշկական ոլորտի պրակտիկ կրթության տրամադրմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներգրավման մեխանիզմների համակարգումը, ընթացակարգերով սահմանված մրցույթների անցկացումը, դասախոսական կազմի գործունեության գնահատման լրացուցիչ օբյեկտիվ մեխանիզմների կիրառումը կնպաստեն փորձառու, ոլորտային նեղ մասնագիտացում ունեցող դասախոսների ներգրավմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի քայլերը դասախոսներին ներկայացվող պահանջների հստակեցման գործում, սակայն հարկ է համարում ընդգծել մեկ դասախոսի կողմից դասավանդվող առարկաների քանակի նվազման անհրաժեշտության մասին, ինչը էականորեն կբարելավի դասավանդման գործընթացները: Քոլեջի կողմից դասախոսների

աշխատաժամանակի և ծանրաբեռնվածության առավել իրատեսական ծավալների ձևավորումը ևս կբարձրացնի դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը:

Փորձագիտական խմբի համար տեսանելի են քոլեջի գործընթացները դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար: Կարևոր հանգամանք է նաև կիրառվող գործիքակազմի բազմազանեցումը որակի ապահովման մշակույթի ձևավորմամբ պայմանավորված: Փորձագիտական խմբի գնահատմամբ այդ գործընթացների ՊԻԳԲ շրջափուլով իրականացումը, վերլուծությունների՝ հետագա բարելավումների հիմքում դրվելը թույլ կտան խորքային խնդիրները առավել կառավարելի տարբերակով լուծել, հնարավորություն կընձեռեն դասախոսական կազմի մասնագիտական որակների շարունակաբար զարգացման համար: Այս տեսանկյունից փորձագիտական խումբն անհրաժեշտ է համարում մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումների համար քոլեջի կողմից հատկացվող ռեսուրսների պարբերական ավելացումը: Հաշվի առնելով պրակտիկ դասախոսների՝ իրենց մյուս աշխատավայրերում մասնագիտական վերապատրաստումների մասնակցելու հանգամանքը՝ փորձագիտական խումբը կարևորում է մասնագիտական ներքին վերապատրաստումների իրականացումը, ինչը կնպաստի ՊԴ կազմի մասնագիտական որակների բարձրացմանը:

Փորձագիտական խումբն անհրաժեշտ է համարում նաև ամբիոնների աշխատանքի առավել համակարգային դառնալը վերապատրաստումների պլանավորման, սկսնակ դասախոսների ուղղորդման, փորձի փոխանակման գործուն մեխանիզմների ներդրման և լավագույն փորձի տարածման նպատակով:

Դրական հանգամանք է նաև քոլեջի կողմից հաստատության հնարավորությունների սահմանում դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմների առկայությունը, ինչը որոշակիորեն նպաստում է անձնակազմի մոտիվացիայի բարձրացմանը:

Քոլեջը քայլեր է իրականացնում դասախոսական կազմի կայունության ապահովման համար, այդուհանդերձ առկա հոսունությունը կանխելու համար անհրաժեշտություն կա վերլուծելու դրա պատճառները, իսկ լրացուցիչ խթանման մեխանիզմների գործարկումը, ֆինանսների հատկացումը աշխատավարձերի բարձրացման համար կայունության ապահովման լրացուցիչ հիմքեր կստեղծեն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ստորաբաժանումների և ՈւՕ կազմի ներգրավումը ամբիոնների աշխատանքներում և գործառույթների տարանջատումը գործողությունները պլանավորելու և արդյունավետության առավել իրատեսական ցուցիչներ սահմանելու հնարավորություն կընձեռի:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում գործում են ՊԴ կազմի ընտրության ընթացակարգեր, երիտասարդ կադրերով համալրելու որոշակի գործընթացներ, դասախոսական կազմը համալրվում է մասնագիտական ոլորտից գործնական հմտություններ ունեցող մասնագետներով, առկա են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, խրախուսման որոշակի գործիքակազմ, քոլեջն ունի համեմատաբար կայուն դասախոսական

կազմ կրթական ծրագրերի իրականացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում խնդիր է դրված նպաստել քոլեջի հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը, նշված են խնդրի իրագործման գործողությունները և առաջընթացի գնահատման ցուցիչները: Նախատեսված է մշակել հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներ, ուսանողներին ընդգրկել ամբիոնների հետազոտական աշխատանքներում, կատարել համատեղ հետազոտական աշխատանքներ տեղական և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ, նախաձեռնել ուսանողական գիտաժողովներ և սեմինարներ: Հաստատությունը հետազոտության ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնությունները դրսևորում է հետևյալ եկարաժամկետ հետազոտական ուղղություններով՝ սոցիալ-տնտեսական և բժշկակենսաբանական, ավանդական և ժամանակակից դեղաբանության, մանկաբարձական և քույրական գործունեության ժամանակակից հիմնահարցեր:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ քոլեջը սահմանված հետազոտական ուղղություններով դեռևս արձանագրված հաջողություններ և շոշափելի արդյունքներ չունի, սակայն ՌԾ պլան ժամանակացույցում խնդիր է առաջադրել համատեղ հետազոտական աշխատանքների կատարումը տեղական և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ: 2021թ.-ից սկսած ՄՈՒՀ-ը բյուջեում ֆինանսական որոշակի միջոցներ է հատկացրել հետազոտական գործունեության զարգացման համար, որոնք 2022թ. ավելացվել են, սակայն այդ միջոցները դեռևս չեն օգտագործվել հետազոտությունների խրախուսման և հետազոտական աշխատանքների տպագրման համար:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ամբիոնների 2019-2024թթ. 5-ամյա աշխատանքային պլաններում ներառված է գիտական հետազոտական աշխատանքների պլանավորումը 2021-2024 տարիների համար: Քոլեջի հետազոտական աշխատանքների ընթացիկ իրականացումը և վերահսկողությունը կատարվում է դասախոսների, ամբիոնների վարիչների և ուսումնական մասի կողմից:

Քոլեջը նաև որոշակի քայլեր է կատարում հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: Հաշվի առնելով դասախոսների կողմից ռուսերենի

իմացության բարձր մակարդակը, քոլեջն իր համար հետազոտության ոլորտում արտաքին համագործակցության կրթական տարածք է դիտարկում ԱՊՀ տարածքը: 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում համագործակցության պայմանագրեր են կնքվել ՌԴ-ի և Բելառուսի Հանրապետության համանման քոլեջների հետ, որոնց շրջանակներում պլանավորվում են կազմակերպել համատեղ գիտական կոնֆերանսներ և աշխատաժողովներ: Տեղական գործընկերների հետ հետազոտական գործունեությունը իրականացվում է պրակտիկայի շրջանակներում՝ օգտագործելով դեղատների, պոլիկլինիկաների և այլ հաստատությունների ռեսուրսներն ու հնարավորությունները՝ ծանոթանալով դեղերի պատրաստման տեխնոլոգիաներին լաբորատոր միջավայրում աշխատելու միջոցով: «Մանկաբարձական գործ» մասնագիտության ուսանողները հիվանդանոցներում հիվանդությունների պատմությունների ուսումնասիրման միջոցով հավաքագրում են տվյալներ հղիների շրջանում հաճախ հանդիպող խնդիրների վերաբերյալ, որոնք այնուհետ ներկայացնում են դասապրոցեսի ընթացքում, քննարկում մյուս ուսանողների հետ, իրականացնում դատողություններ:

Քոլեջի ուսանողները հետազոտական և վերլուծական աշխատանքներն իրականացնում են ռեֆերատների, պաստառների, պրեզենտացիաների, անհատական, կուրսային և ավարտական աշխատանքների միջոցով: Հարկ է նշել, որ ուսանողների կարողություններից և ցանկությունից ելնելով՝ ուսանողները հնարավորություն ունեն կուրսային և ավարտական աշխատանքներ իրականացնելու, սակայն դրանց իրականացումը դեռ ինստիտուցիոնալ և պարտադիր բնույթ չի կրում և ներառված չէ ուսումնական պլաններում: Ավարտական աշխատանք իրականացնող ուսանողները սակավաթիվ են քոլեջում: Ավարտական աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա է վերլուծական բաղադրիչ, տվյալների ուսումնասիրություն և համապատասխան եզրահանգումներ:

Դասախոսների հետազոտական գործունեությունը իրականացվում է ուսանողների կատարած աշխատանքների ուղղորդման և վերահսկման շրջանակներում, սակայն քոլեջում դասախոսների կողմից գիտահետազոտական աշխատանքներ չեն իրականացվում, դասախոսները չունեն տպագրած նյութեր և ձեռնարկներ, չկան գիտական աստիճան ունեցող դասավանդողներ:

Քոլեջն ունի հետազոտությունների իրականացման և զարգացման համար «Միջին մասնագիտական կրթական ծրագրի դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգ, որը քննարկվել և հաստատվել է տնօրինական խորհրդի և տնօրենի կողմից: Կարգում ներկայացված է հետազոտական աշխատանքների նկարագրությունը, գնահատումը, կատարման ժամանակացույցը: Քոլեջն ունի նաև 2021թ. մշակած «Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականություն», որի խնդիրներից են հետազոտական և կրթական գործունեության միջև արդյունավետ, կայուն և տրամաբանական փոխկապակցվածության ձևավորումը, դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավումը հետազոտական և գիտամեթոդական աշխատանքներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսները հաճախ են

ներգրավում ուսանողներին հետազոտական աշխատանքներում՝ հանձնարարելով անհատական աշխատանքներ, ռեֆերատներ, քննարկելով իրավիճակային խնդիրներ, սակայն չկա հանձնարարությունների հստակ ցանկ, որը կարտահայտի վերլուծական և ստեղծագործական հմտությունների զարգացումը: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները պատրաստել են հերբարիումներ, իրենց կողմից ուսումնասիրվող թեմաների ուղղությամբ պատրաստել են պաստառներ, իրենց ուսումնասիրությունները ներկայացրել բաց դասերի շրջանակներում: «Ձեռներեցություն» մոդուլի շրջանակներում ուսանողները կազմում են բիզնես պլաններ, իրականացնում են «SWOT» վերլուծություններ:

Քոլեջում հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելու նպատակով կազմակերպվում են բաց դասեր, սեմինարներ և տարատեսակ միջոցառումներ: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի ատամնատեխնիկական մասնագիտական լաբորատորիայում ուսանողները աշխատում են ֆանտոմների վրա՝ ստանալով հստակ առաջադրանքներ՝ ուսումնասիրելու և լրացնելու բացակայող ատամները, դիտարկում են ատամների կառուցվածքը: Դասապրոցեսի ընթացքում ուսանողներին բոլոր կլինիկակական առարկաներից տրվում են իրավիճակային խնդիրներ իրական փորձի հիման վրա եղած օրինակները քննարկելու և լուծումներ առաջարկելու համար: Անցկացվում են նաև դերային խաղեր, ուսանողները կիրառում են քոլեջի ունեցած մուլյաժները իրենց դիտարկումները ներկայացնելու համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը առանձնացրել է հետազոտական ուղղությամբ իր նպատակները և զարգացման ուղղությունները՝ դրանք կարևորելով նաև իր Ռազմավարական զարգացման ծրագրում: Հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով քոլեջը նաև որոշակի ֆինանսական միջոցներ է փորձում հատկացնել: Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական այդ միջոցների առավել նպատակային տրամադրումը, հետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի ներգրավման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդնումը մեծապես կնպաստեն հետազոտական ոլորտում քոլեջի սահմանած ուղղությունների և մարտահրավերների հաղթահարմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի միտումները ուսանողների շրջանում հետազոտական աշխատանքները պարտադիր դարձնելու ուղղությամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերում առկա են որոշակի հանձնարարություններ ուսանողների մոտ վերլուծական մտքի ձևավորման համար: Այս տեսանկյունից հարկ է նշել նաև պրակտիկաների դերը ուսանողների վերլուծական-գործնական հմտությունների զարգացման համար: Փորձագիտական խմբի գնահատմամբ ուսանողներին տրվող հանձնարարականների համակարգումը, ուսումնառության գործընթացում հետազոտական բաղադրիչի ձևավորմանը միտված առաջադրանքների իրականացումը, կրթական միջավայրի՝ անհրաժեշտ ռեսուրսների հագեցվածությամբ ապահովումը կնպաստեն Որակավորումների ազգային շրջանակի հինգերորդ մակարդակով

սահմանված կարողություններով ստեղծագործական, վերլուծող մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերը միջազգայանցման ապահովման ուղղությամբ, ինչի մասին են վկայում քոլեջի կնքած մի շարք պայմանագրերը, որոնք միտված են համատեղ հետազոտությունների իրականացմանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ քոլեջի պոտենցիալի և դասախոսների օտար լեզվի մակարդակի գնահատումը կարևոր են հետազոտական համատեղ արդյունք ունենալու համար: Կարևոր հանգամանք է նաև տեղական կազմակերպությունների հետ համագործակցության շեշտադրումը հետազոտական աշխատանքների առավել պարբերական և արդյունքահենք իրականացման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև քոլեջի միտումները ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման ուղղությամբ, ինչի նպատակով ուսանողներին խրախուսում է իրականացնել կուրսային և անհատական աշխատանքներ, պատրաստել ռեֆերատներ և պաստառներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս աշխատաքնների թեմաների ընտրության հստակեցումը, գնահատման համակարգի համապատասխանեցումը վերջնարդյուքններին և բոլոր ուսանողներին իրականացվող գործընթացներում ներգրավումը կնպաստեն բժշկական ոլորտի վերլուծող և խնդիրների լուծմանը առավել համակարգային մոտեցում ունեցող մասնագետների պատրաստմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը սահմանել է հետազոտական ուղղությամբ իր հետաքրքրությունները, քայլեր է իրականացնում խրախուսելու հետազոտության իրականացումը, փորձում է որոշակի միջոցներ հատկացնել իր սահմանած նպատակների իրականացման համար, ինչպես նաև ձևավորել մեխանիզմներ ուսումնառության գործընթացում հետազոտական բաղադրիչի ավելացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը նյութատեխնիկական ռեսուրսների համալրումն ու արդիականացումը համարում է զարգացման ռազմավարական խնդիր,

որի իրագործման համար սահմանել է գործողությունների պլան։ Քոլեջը գործող մասնագիտությունների կրթական ծրագրերն իրականացնում է վարձակալած հիմունքներով 305,1 քմ ընդհանուր մակերեսով տարածքում, որը տեղակայված է Երևանի զբոսաշրջության սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում։ Ուսումնական գործընթացի կազմակերպման համար առկա է 2 աշխատասենյակ վարչական աշխատակիցների համար, 10 լսարաններ, 2 լաբորատորիաներ, 1 համակարգչային լսարան, 2 մասնագիտական կաբինետ։ Փորձագիտական խմբի կողմից ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզվեց, որ քոլեջում կա անհրաժեշտ սարքավորումներով, գործիքներով և նյութերով հագեցված ատամնատեխնիկական լաբորատորիա և համակարգչային կաբինետ՝ 10 համակարգիչներով և 2 պրոյեկտորով։ Լսարանների և կաբինետների սակավության պատճառով քոլեջը միավորել է մի քանի կաբինետներ՝ օրինակ, դեղաբանության կաբինետն ու անօրգանական, օրգանական, անալիտիկ և դեղագործական քիմիաների լաբորատորիաները, որտեղ կա դեղերի դարակաշար և լաբորատոր փորձերի համար նախատեսված հատված, որը չի համապատասխանում քիմիական նյութերի հետ աշխատանքների համար նախատեսված լաբորատոր նվազագույն պահանջներին։

Կրթական ծրագրերի նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջների, ուսումնական կաբինետների և լաբորատորիաների երաշխավորվող ցանկի և ուսումնական պլանների համաձայն՝ քոլեջը կրթական ծրագրերի իրականացման համար պետք է ունենա համապատասխան կաբինետներ ու լաբորատորիաներ, սակայն քոլեջը չունի մանրէաբանության և իմունաբանության, բուսաբանության և ֆարմակագնոզիայի, դեղերի դեղատնային և գործարանային տեխնոլոգիայի, դեղաձևերի պատրաստման տեխնոլոգիայի լաբորատորիաներ և աղետների բժշկության, քաղպաշտպանության, նեղ մասնագիտական առարկաների, վարակիչ հիվանդությունների, վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի կաբինետներ, որոնք նախատեսված են ՄԿԾ ուսումնական պլաններով։ Քոլեջը պրակտիկայի և գործնական պարապմունքների ժամանակ որոշակիորեն օգտագործում է գործընկեր հաստատությունների ռեսուրսները. «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դեպքում օգտվում է ձուլարանի ծառայություններից, «Դեղագործություն» մասնագիտության դեպքում դեղատան հնարավորությունններից դեղերի պատրաստման համար։

Քոլեջն ունի 8 քմ մակերեսով գրադարանի համար հատկացված տարածք, որը զբաղեցնում է մասնագիտական կաբինետի մի մաս։ Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի գրադարանավարի հաստիքը համալրված չէ, գրադարանային աշխատանքները համակարգված չեն, իսկ գործառույթներն իրականացնում են ամբիոնների վարիչները։ Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրապահոցում առկա է 316 անուն ուսումնական գրականություն, որից 156-ը՝ հայալեզու, 160-ը՝ ռուսերեն և անգլերեն լեզվով։ Առկա գրականության հիմնական մասը կազմում են բուհական և հանրակրթական գրքերը, իսկ միջին մասնագիտական կրթության համար նախատեսված դասագրքերը և ձեռնարկները սակավաթիվ են։ ՄՈՒՀ-ը ժամանակակից ուսումնական գրականությամբ՝ դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով նպատակաուղղված համալրում չի իրականացնում։ Քոլեջը վճարովի հիմունքներով համագործակցում է Ազգային գրադարանի հետ։ Փորձագիտական

այցը ցույց տվեց, որ ուսանողները քիչ չեն օգտվում այդ ռեսուրսից: Քոլեջը չունի ուսումնառության նյութերի էլեկտրոնային գրապահոց, համակարգչային կաբինետը ազատ տրամադրվում է ուսանողներին էլեկտրոնային բաց ազբյուրներից օգտվելու համար, ինչպես նաև առաջիկայում նախատեսում է ընդլայնել էլեկտրոնային ռեսուրսների ցանկը՝ մասնագիտական էլեկտրոնային շտեմարաններին անդամակցելով:

Քոլեջի բյուջեն ձևավորվում է հիմնականում ուսման վարձավճարների հաշվին, մասնավորապես, 2020թ. բյուջեի մուտքերի 92%-ը և 2021 թ. 99,8%-ը կազմում են վարձավճարները, իսկ այլ աղբյուրներից մուտքերը՝ համապատասխանաբար 8 % և 0,2 %: Քոլեջի ծախսերի մեջ զգալի մասնաբաժին են կազմում աշխատավարձի գծով ծախսերը, այս ծախսերը 2020թ. կազմել են 58,8 %, իսկ 2021թ.՝ 48 %: ՌԾ-ում խնդիր է դրված նյութատեխնիկական ռեսուրսների համալրումն ու արդիականացումը, ըստ այդմ բյուջեի առնվազն 1%-ը հատկացվում է նյութատեխնիկական բազայի արդիականացման համար, 5%-ը լսարանների, կաբինետների և լաբորատորիաների համար: Հարկ է նշել, որ քոլեջի հիմնադիրը ֆինանսական ներդրումներ է կատարել ռեսուրսների բարելավման նպատակով, 2021թ. տեղադրել են ջեռուցման համակարգ, ստեղծել է համակարգչային լսարան, ձեռք է բերել կահույք, ուսումնական դիդակտիկ պարագաներ, համակարգիչներ և այլն: Այնուամենայնիվ փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջի առկա նյութատեխնիկական բազան և ռեսուրսները լիովին չեն ապահովում կրթական ծրագրերի պահանջները, մասնավորապես՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ» և «Դեղագործություն» կրթական ծրագրերի իրականացման համար նախատեսված կաբինետներն ու լաբորատորիաները դեռևս լիարժեք համալրված չեն արդի սարքավորումներով, մուլյաժներով և անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով:

Քոլեջը ներդրել է «Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ», համաձայն որի իրականացվում է ֆինանսական ռեսուրսների բաշխում և կառավարում: Ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է ըստ ռազամավարական առաջնահերթությունների և նպատակների, որոնց համար բյուջեի նախահաշվում նախատեսվում են առանձին հոդվածներ: Կրթական ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցները բաշխվում են ամենամյա պլանավորմամբ՝ համաձայն ստորաբաժանումների կողմից ներկայացված կարիքների, որի համար կատարում է ռեսուրսների առկա վիճակի գնահատում: Ռեսուրսային համալրման համար հաշվի են առնվում նաև հաստատության տվյալ պահին ունեցած ֆինանսական հնարավորությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2020թ.-ից քոլեջի բյուջեում ներառված «Զարգացման ֆոնդ» հոդվածը, որն ավելացվում է տարեկան առնվազն 5%-ով, նախատեսված է նոր տարածք վարձակալելու կամ սեփական շենք ունենանալու համար, որը քոլեջը համարում է իր գերակա խնդիրը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ քոլեջը դեռևս գործուն քայլեր չի իրականացնում ֆինանսական աղբյուրների բազմազանեցման, նոր միջոցների ներգրավման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ ՄԿԾ ծախսարդյունավետության հաշվարկ քոլեջը չի իրականացրել՝ հաշվի առնելով օրինակ՝ «Մանկաբարձական գործ» մասնագիտությունը, որն ունի 3 ուսանող:

Քոլեջում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացներն իրականացնում են ՄՌԿ և ընդհանուր բաժինը՝ գործավարության կարգի համաձայն: Քոլեջն ունի նաև արխիվ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բարեփոխումներին նախորդող փուլում, բազմաթիվ արձանագրություններ վարվել են ձեռագիր մատյաններով, ներկայումս կատարվում է գործընթացների էլեկտրոնային փաստաթղթավորում, սակայն դեռևս առկա չէ փաստաթղթաշրջանառության կառավարման էլեկտրոնային համակարգ: Այդ նպատակով, քոլեջը նախատեսում է առաջիկայում ներդնել «Microsoft Sharepoint» ծրագիրը:

Քոլեջում գործում է անվտանգության ներքին համակարգ, քաղաքացիական պաշտ-պանության շտաբ, կան հակահրդեհային անվտանգության համար կրակմարիչներ: Տեսանելի վայրերում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաները: Վարձակալված տարածքի տեղորոշմամբ պայմանավորված՝ քոլեջը չունի առանձնացված մուտք: Քոլեջը չունի բուժկետ: Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողները և աշխատակիցները կարող են օգտվել Հայ-հունական քոլեջի բուժկետից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ուսանողներն անհրաժեշտության դեպքում դիմում են ուսումնական մաս՝ բժշկական կրթություն ունեցող վարչական աշխատակիցներին, բուժօգնություն ստանալու նպատակով: Ռեսուրսների դիտարկման ընթացքում պարզվեց, որ քոլեջի լաբորատորիաներում փակցված չեն անվտանգության կանոնները: Քոլեջում սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց լիարժեք ներգրավման համար առկա է ենթակառուցվածքների համապատասխանեցման խնդիր, որովհետև շենքը չունի վերելակ, մուտքերը հարմարեցված չեն շարժասայլակների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջը չունի սննդի կետ:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման նպատակով՝ քոլեջում իրականացվել են հարցումներ (2022թ.), որոնց արդյունքների հիման բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթը ՈԱ պատասխանատուն ներկայացրել է տնօրինական խորհրդում: Առաջարկվել է արդիականացնել համակարգչային տեխնիկական և տեղեկատվական ռեսուրսները, մասնագիտական կաբինետները Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջարկների հիման վրա քոլեջն արդիականացրել է համակարգչային կաբինետը, ատամնատեխնիկական լաբորատորիան և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ռեսուրսների համալրումն և արդիականացումը համարում է զարգացման ռազմավարական խնդիր: Կարևոր հանգամանք է, որ քոլեջը որոշակի քայլեր իրականացրել է կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ՝ ստեղծելով ատամնատեխնիկական լաբորատորիա, համալրելով համակարգչային լսարանը: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում ուումնական պլաններով նախատեսված մի շարք լաբորատորիաների և կաբինետների բացակայությունը, ինչը կարող է խոչընդոտել կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Կարևոր հանգամանք է, որ ուսունառության ընթացիկ կազմակերպման համար քոլեջը փորձում է իր ֆինանսական հնարավորությունների սահմանում ձեռք բերել մուլյաժներ, դիտողական պարագաներ, սակայն ռեսուրսային համալրման ընթացքը բավական դանդաղ է ընթանում և համաչափ չէ բոլոր կրթական ծրագրերի համար: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ֆինանսական նոր ուղիների որոնումը և գործընկեր կազմակերպությունների հետ ռեսուրսների համատեղ օգտագործումը, ինչը քոլեջը որոշակիորեն իրականացնում է ուսանողների պրակտիկ կարողությունների ձևավորման նպատակով:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի գրադարանային ֆոնդի համալրումը միջին մասնագիտական բժշկական կրթության համար նախատեսված դասագրքերով և ձեռնարկներով ինչը նախադրյալներ կստեղծի ուսումնառության համակարգված գործընթացի իրականացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության առկայությունը, սակայն ֆինանսական մուտքերի սահմանափակ լինելը, ֆինանսական աղբյուրների ներգրավման բազմազանեցման մեխանիզմների բացակայությունը կարող են խոչընդոտել քոլեջի սահմանած ռազմավարական ուղղությունների և առաջադրված նպատակների իրականացումը: Կարևոր հանգամանք է զարգացման ֆոնդի առկայությունը, որի նպատակային և քոլեջի առաջնահերթություններին համապատասխան ուղղորդումը երաշխիքներ կստեղծի հաստատության կայուն զարգացման համար: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում որոշ կրթական ծրագրերի ոչ եկամտաբեր լինելը և ծախսարդյունավետությամբ պայմանավորված կրթական ծրագրերի շարունակականության ապահովման վտանգը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները համակարգվել են ՄՌԿ և ընդհանուր բաժնի կողմից: Այդուհանդերձ, էլեկտրոնային միասնական համակարգի բացակայությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ կառավարման և հաշվետվողականության արդյունավետ իրականացման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ լաբորատորիաներում անվտանգային պահանջների սահմանումը կկանոնակարգի դրանցից օգտվելու գործընթացները՝ նպաստելով ուսանողների համար անվտանգ միջավայրի ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ռեսուրսների կիրառելիության և հասանելիության, արդյունավետության գնահատման վերաբերյալ քոլեջի կողմից տվյալների հավաքագրումը, ինչը որոշակիորեն նպաստում է ընթացիկ կարիքների վերհանմանը և ըստ քոլեջի հնարավորությունների դրանց համալրմանն ու բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր Զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներն իրականացնելու և կրթական ծրագրերի վերջնարդյունքներին հասնելու համար ապահովված չէ համապատասխան նյութական և ֆինանսական միջոցներով, ունի մասնագիտական գրականության և նյութատեխնիկական բազայի համալրման խնդիրներ,

կրթական ծրագրերի իրականացման համար նախատեսված կաբինետներն ու լաբորատորի-աները դեռևս լիարժեք համալրված չեն արդի սարքավորումներով, մուլյաժներով և անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով, ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը չի նպաստում առկա խնդիրների հաղթահարմանը, առկա չեն ֆինանսական մուտքերի բազմազանեցման մեխանիզմներ, տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության իրականացման միասնական հարթակ, ստեղծված չեն ենթակառուցվածքներ ուսանողների անվտանգության ապահովման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը չի բավարարում չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը կարևորում է հաշվետվողականության ապահովումը և իր գործընթացների մասին հասարակությանը իրազեկումը: Քոլեջն ապահովում է հաշվետվողականությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, ՀՀ վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչություններին: Մինչև 2019թ. հաշվետվողականությունը ՄՈՒՀ-ում կրել է ոչ համակարգված բնույթ, այդուհետ ստեղծվել են համապատասխան ձևաչափեր՝ փորձելով ապահովել հաշվետվությունների պարբերականությունը: Ներկայումս ստորաբաժանումները, այդ թվում՝ ամբիոնները, կադրերի բաժինը, ՈԱ պատասխանատուն գործունեության կատարողականները ներկայացնում և քննարկում են ՄՈՒՀ-ի մանկավարժական և տնօրինական խորհուրդներում: Հաշվետվությունների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրանց վերլուծականությունը թույլ է, դրանք ոչ միշտ են ապահովում ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը:

ՄՈՒՀ-ն իր գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունն ապահովելու նպատակով օգտագործում է ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը, ինչպես նաև պաշտոնական կայքը, որը համալրվում է նաև անգլերենով՝ միջազգային հարթակում հասանելի լինելու նպատակով: Կայքում առկա է տեղեկատվություն քոլեջում իրականացվող մասնագիտությունների վերաբերյալ: Տեղադրված են ուսումնական պլանները, պրակտիկայի ծրագրերը, դասացուցակները և այլն: Թափուր տեղերի համալրման մասին հայտարարությունները տեղադրում են ՀՀ Կրթական տեղեկատվական ազգային կենտրոնի կողմից կառավարվող կրթական միասնական տեղեկատվական հարթակում, ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում:

Քոլեջն իր գործունեության մասին թափանցիկությունն ապահովում է նաև տարաբնույթ բուկլետների տպագրման, որոշ գովազդների ցուցադրման և դպրոցներ այցելությունների միջոցով: Կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություն դեռևս չի իրականացվել:

Քոլեջում առկա է Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի քաղաքականություն, որի նպատակն է բոլոր շահագրգիռ կողմերին տրամադրել տեղեկատվություն իր գործունեության և ձեռքբերումների վերաբերյալ: ՄՈՒՀ-ը հետադարձ կապը փորձում է ապահովել պրակտիկաների ղեկավարներից և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներից տեղեկատվության հավաքագրման միջոցով: Բացի այդ, ՄՈՒՀ-ի ընդհանուր և տնօրինական խորհուրդներում ներգրավված է նաև արտաքին շահակից՝ գործատու, որն իր առաջարկներով և գործունեությամբ կարող է հետագայում նպաստել հետադարձ կապի ձևավորմանը: Ըստ ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է Արտաքին կապերի քաղաքականության բարեփոխում՝ նպատակ հետապնդելով հետագայում դառնալ կարևոր օղակ հատադարձ կապի կայուն մեխանիզմների ձևավորման գործում: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը դեռևս պատասխանատվությունների հստակ բաշխում չի իրականացրել այս ուղղությունների համար, իսկ գործառույթներն իրականացնում են ՄՌԿ-ը, Ընդհանուր բաժինը և ՈԱ պատասխանատուն:

Քոլեջի 2019-2024 թթ. ՌԶԾ-ում նախատեսված խնդիրներից է «ակտիվացնել և ամրապնդել հասարակությանը կրթական, բժշկական, առողջության պահպանման, մասնագիտական խորհրդատվության ծառայությունների տրամադրումը և դրանց համապատասխան գործողությունների իրականացման մեխանիզմները»: Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ դեռ չի իրականացվել հասարակության կարիքների լիարժեք ուսումնասիրություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացնում դասընթացներ բժշկության ոլորտին առնչվող թեմաներով, սակայն քոլեջի մասնագետները պատրաստակամ են անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում առկա են ներքին և արտաքին հաշվետվողականության որոշակի մեխանիզմներ, որոնք նպաստում են քոլեջում ընթացող գործընթացների թափանցիկությանը: Դրական է հաշվետվությունների միասնական ձևաչափի ներդնումը, սակայն հաշվետվությունների վերլուծական բաղադրիչի ապահովումը կնպաստի խնդիրների վերհանմանը, հաշվետվողականության գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը նշում է քոլեջի մասին առավել համապարփակ տեղեկատվության հրապարակման անհրաժեշտությունը տարբեր հարթակներում, որը կնպաստի դիմորդների թվի ավելացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում տեղեկատվության հասանելիության վերաբերյալ մեխանիզմների առկայությունը՝ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջեր, ինչպես նաև պաշտոնական կայքէջը, որոնցով ապահովվում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը: Փորձագիտական խմբի կողմից

նկատելի են քոլեջի ջանքերը պաշտոնական կայքի հայերեն և անգլերեն տիրույթների համալրման ուղղությամբ, ինչը թափանցիկության ապահովման լրացուցիչ հնարավորություններ է տալիս ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս: Փորձագիտական խումբը գտնում է, որ տեղեկատվության շարունակական և պարբերաբար թարմացումը քոլեջին կդարձնի ավելի տեսանելի կրթական միջավայրում:

Փորձագիտական խումբը գնահատում է շահակիցների հետ հետադարձ կապի առկայությունը և գտնում, որ դրա մշտական և համակարգված բնույթ կրելը, հատկապես գործատուների հետ հետադարձ կապի առավել ակտիվացումը կնպաստեն շահակիցների կարիքների լիարժեք բացահայտմանը, բարելավման հետագա ուղղությունների կանխորոշմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև արտաքին կապերի բաժնի հետագա լիարժեք գործունեությունը և աշխատանքը, որը ևս լրացուցիչ մեխանիզմներ կստեղծի հետադարձ կապի կայունության ապահովման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմների ամբողջական ներդնումը քոլեջի դասախոսական և ուսանողական համակազմերի պոտենցիալի կիրառմամբ կնպաստեն ինչպես կապերի ձևավորմանը, այնպես էլ քոլեջի՝ որպես ուսումնական հաստատության հասարակական պատասխանատվության իրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում ձևավորված է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, կանոնակարգվել են հաշվետվողականության մեխանիզմները, ներդրվել են հաստատության գործընթացների թափանցիկության ապահովման հարթակներ, գործում են հետադարձ կապի ապահովման որոշակի մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջն իր Զարգացման ռազմավարական ծրագրում խնդիր է դրել ընդլայնել միջազգայանցմանն ու փորձի փոխանակմանը միտված միջոցառումները: Քոլեջի նպատակն է «ձգտել ընդլայնել Հայաստանի և արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակը, զարգացնել ուսումնառության արդյունքների

փոխճանաչման մեխանիզմները՝ նպաստել ուսանողների, դասախոսների ակադեմիական տեղաշարժին և Քոլեջի միջազգային վարկանիշի ձեռքբերմանը»: Նշված գործընթացների իրականացման համար քոլեջը դեռևս ընթացակարգեր չի ձևավորել, սակայն որոշակի քայլեր է իրականացրել տարբեր ոլորտային կազմակերպությունների հետ գործընկերային կապերի հաստատման համար: ՄՈՒՀ-ն ունի համագործակցության պայմանագրեր Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի», Ռուսաստանի Դաշնության «Մոսկվայի պետական բժշկական քոլեջի» և Էստոնիայի «Վալգա մասնագիտական ուսումնական կենտրոնի» հետ: Փաստաթղթային որոշակի հենքի ստեղծումը դեռևս չի հանգեցրել տեսանելի արդյունքների այս առումով, սակայն իրականացված առցանց հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ են ձեռքբերվել առաջիկա տարվա ընթացքում արտաքին կապերին ուղղված ընթացակարգերի բենչմարքինգի իրականացման ուղղությամբ:

Միջազգային կապերի զարգացման տեսանկյունից կարևոր է նշել, որ ՄՈՒՀ-ը ԿԳՄՍ նախարարությունից ստացել է թույլատվություն օտարալեզու կրթական ծրագրի իրականացման համար՝ հաշվի առնելով օտարալեզու դիմորդների առկայությունը: Սակայն, հաշվի առնելով դիմորդների դեռևս քիչ թվաքանակը և այդ առումով ծախսարդյունավետությունը՝ քոլեջը որոշում է կայացրել մեկ տարով հետաձգել ծրագրի մեկնարկը և միջոցներն ուղղել նոր դիմորդների ներգրավմանը: Հաջորդ ուսումնական տարում ՄՈՒՀ-ը նպատակ ունի գործարկելու տվյալ կրթական ծրագիրը և պատրաստում է բացել նաև նախապատրաստական դասընթացներ օտարազգի ուսանողների համար:

Ըստ ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության՝ ՌԾ-ում խնդիր է դրված եղել ստեղծել արտաքին կապերի բաժին, որն ամրագրվել է նաև քոլեջի կազմակերպական կառուցվածքում: ՄՈՒՀ-ն ունի արտաքին կապերի կանոնակարգ, բաժնի վարիչի համար մշակվել է նաև պաշտոնի անձնագիր, որում առավելապես կարևորված են միջազգայնացման գործընթացները: Ֆինանսական ռեսուրսների սղությունը թույլ չի տվել, որ բաժինը գործի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկայի և կարիերայի բաժինը համակարգում է գործատուների և պրակտիկայի վայրերի հետ աշխատանքները, իսկ ՈԱ պատասխանատուն քոլեջի հիմնադրի հետ իրականացնում է գործընթացներ միջազգային գործընկերային կապերի զարգացման ուղղությամբ: Այդուհանդերձ, պարտականությունների և գործառույթների հստակ բաշխում առկա չէ ներպետական արտաքին կապերի հաստատման, միջազգային նոր գործընկերներ ներգրավելու, պայմանագրերն իրականացնելու և դրանց միջոցով ռեսուրսների զարգացումն ապահովելու ուղղությամբ:

ՄՈՒՀ-ն ունի գործող պայմանագրեր մոտ 21 տարբեր կենտրոնների (ատամնատեխնիկական լաբորատորիաներ, կլինիկաներ, պոլիկլինիկաներ) հետ, որոնցից մեծ մասը կնքվել կամ վերակնքվել են 2021թ.: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախկինում շատ համագործակցություններ եղել են հասարարակական հիմունքներով, սակայն ներկայումս արդեն փաստաթղթավորվել են, և որոշ մասն էլ դրվել է վճարովի հիմքերի վրա՝ դրանով իսկ տեսանելի դարձնելով փոխզդեցությունները միմյանց հետ: Վերոնշյալ փաստաթղթային հենքի առկայությունը լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում

ուսանողների գործնական հմտություններն ապահովելու նպատակով պրակտիկաների կազմակերպման համար, որոշ դեպքերում նաև ուսանողների որոշ դասընթացներ իրականացվում են համապատասխան բուժհաստատություններում պրակտիկ դասավանդողների կողմից: Հաստատությունը ՀՀ բժշկական քոլեջների հետ համագործակցության շրջանակներում պարբերաբար փորձի փոխանակման հանդիպումներ է կազմակերպում որակի ապահովման համակարգի ձևավորման, գործընթացներում կիրառվող գործիքակազմի թարմացման նպատակով:

ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթության շարունակականության հնարավորություններ ստեղծող պայմանագրեր և համաձայնագրեր ՀՀ բուհերի (Ավանդական բժշկական համալսարան, Եվրասիա միջազգային համալսարան) հետ: ՄՈՒՀ-ում նաև հետագա զարգացման համար կարևորում են շարժունության համար հիմքերի ստեղծումը: Այդուհանդերձ, կրթական ծրագրերի համընդգրկուն բենչմարքինգ քոլեջում դեռևս չի իրականացվել ապահովելու վերջնարդյունքների համադրելիությունը:

Ներկայումս ՄՈՒՀ-ը նպատակ ունի կատարելագործելուդասախոսների և ուսանողների օտար լեզուների (անգլերեն և ռուսերեն) իմացությունը: Բացի այդ ՄՈՒՀ-ը պատրաստվում է իրականացնել փոխանակային ծրագիր պրակտիկայի շրջանակում Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի հետ: Նախնական պայմանավորվածությունների վրա հենվելով՝ քոլեջը կազմակերպում է լրացուցիչ ռուսերենի դասընթացներ ընտրված ուսանողների համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն ունի ներքին շահակիցների շրջանում բանավոր և գրավոր հարցումներ՝ անգլերեն և ռուսերեն լեզուների իմացության մակարդակի վերաբերյալ: Ըստ որոնց՝ դասավանդողների 81%-ը տիրապետում է օտար լեզուների, այդուհանդերձ հստակեցված չեն վերոնշյալ օտար լեզուները՝ հիմնականում ներառելով ռուսերենի իմացությունը: ՄՈՒՀ-ը դեռևս չունի լրացուցիչ դասընթացներ, ռեսուրսների սղությամբ պայմանավորված չի հատկացնում լրացուցիչ ֆինանսներ՝ նպաստելու օտար լեզվի մակարդակի բարձրացմանը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առաջիկա տարվա ընթացքում հնարավորության սահմաններում որոշակի միջոցներ կհատկացվեն դասընթացների իրականացման համար: Օտարալեզու ծրագրերի իրականացման նպատակով քոլեջը նպատակ ունի ներգրավելու անգլերենին տիրապետող դասավանդողների:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը համագործակցում է տարբեր բժշկական կենտրոնների, այդ թվում կլինիկաների և դեղատնային ցանցերի հետ, ինչը նպաստում է ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորմանը, և հնարավորություն է ընձեռում նրանց աշխատանքի տեղավորման գործընթացում: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման համար աշխատանքների համակարգումը, պատասխանատվությունների հստակ բաշխումը և ֆինանսական լրացուցիչ ռեսուրսների ներգրավումը, ինչը կնպաստի պլանավորված աշխատանքների արդյունավետության

բարձրացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի գործընկերային հարաբերությունների հաստատված շրջանակի առկայությունը և այն ընդլայնելու ուղղությամբ ներդրված ջանքերը: Դրական է, որ ՄՈՒՀ-ը իր ռազմավարական առաջնահերթություններից է համարում արտաքին կապերի բաժնի լիարժեք գործարկումը, սակայն գործընթացների շարունակականության ապահովման և դրանք ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու համար իրականացվող աշխատանքները կանոնակարգման կարիք ունեն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Արտաքին կապերի բաժնի աշխատանքների բաշխումը և դրանց գործառութային շրջանակի հստակեցումը հիմք կհանդիսանա գործընկերային կապերի հաստատման, պլանավորման և արդյունավետ իրականացման համար: Հաստատության պոտենցիալի գնահատմամբ համագործակցային շրջանակի հստակեցումը կարևորվում է փորձագիտական խմբի կողմից: Կարևոր է նաև տեղական գործընկերային հարաբերությունների զարգացումը, այդ թվում այլ քոլեջների, ինչպես նաև գործատուների հետ:

Փորձագիտական խմբի կողմից նկատելի հանգամանք է քոլեջի կողմից շարունակաբար ջանքերի գործադրումը պրակտիկայի նոր վայրերի որոնման, գործատուների շրջանակի ընդլայնման հարցերում: Այս գործընթացները նաև իրենց դրական ազդեցությունն են ունենում պրակտիկ ոլորտից դասավանդողների ներգրավման համար, ինչը փորձի փոխանակման որոշակի հիմքեր կարող է ստեղծել:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը պլանավորում է դասախոսական անձնակազմի և ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարելավում՝ սեփական միջոցների հաշվին, ինչը կնպաստի մասնագիտական դասընթացների վարման և ՄԿԾ-երի շրջանակներում դասախոսների և ուսանողների շարժունության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը կարևորում է միջազգայանցման գործընթացները, հիմքեր է ձևավորել փոխգործակցության շարունակականության ապահովման տեսանկյունից, համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների ու բժշկական ոլորտի հաստատությունների հետ, հաստատությունը հիմքեր է ստեղծել միջազգայնացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջի որակի ապահովման գործընթացները մեկնարկել են 2018-2019 ուսումնական տարվանից սկսած: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն (2019թ.): Քոլեջի ՈԱ քաղաքականությունն ընդգրկում է քոլեջի գործունեության բոլոր ուղղությունները: Քոլեջում գործող քաղաքականությունները և ընթացակարգերը վերանայվել են, ստեղծվել և բարելավվել են ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերը, ինչը հիմք է հանդիսացել արտաքին փորձագետների մասնակցությամբ ՈԱ ձեռնարկի մշակման համար (2021թ):

Քոլեջի դիտարկմամբ Որակի ներքին ապահովման մշակույթը դեռ ամբողջովին ձևավորված չէ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ չնայած ՈԱ ձեռնարկի առկայությանը ներքին շահակիցները դեռևս լիարժեք չեն ընկալում իրենց դերակատարությունը որակի ապահովման գործընթացներում՝ ապավինելով ՈԱ պատասխանտուի կողմից գործընթացների վերահսկմանը: ՈԱ պատասխանատուի կողմից ցուցաբերվել է բազմակողմանի աջակցություն գործընթացների համակարգման համար, օրինակ՝ Ուսանողական խորհրդին աջակցել է նիստերի արձանագրությունների կազման և էլեկտրոնային ձևաչափով պահպանման, ինչպես նաև ՈՒԽ նախագահի, փոխնախագահի և քարտուղարի ընտրության ընթացակարգի ապահովման հարցում, աջակցել է ստորաբաժանումների պլանավորման աշխատանքներին և այլն:

ՈԱ պատասխանատուի կողմից իրականացվել են մի շարք հարցումներ քոլեջի գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության հավաքագրման և ինքնավերլուծության իրականացման նպատակով, այնուամենայնիվ, հարցումները ներքին շահակիցների շրջանում (օր. ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ) դեռևս չունեն պարբերականություն:

Քոլեջը ֆինանսական միջոցներ է հատկացրել համալրելու ՈԱ պատասխանատուի հաստիքը: ՈԱ պատասխանատուն անմիջականորեն հաշվետու է տնօրենին և հանդես է գալիս կատարողական հաշվետվությամբ տնօրինական խորհրդում և ընդհանուր ժողովում: ՄՈՒՀ-ի ՈԱ պատասխանտուն մասնակից է եղել մի շարք վերպատրաստումների կրթության բարեփոխումների վերաբերյալ (ՈԱԱԿ, ՄԿՈՒԶԱԿ): ՈԱ պատասխանատուն իրականացնում է որակի ապահովման միջոցառումներ, մասնակից է եղել քոլեջում իրականացված փաստաթղթային բարեփոխումներին, հանդես է եկել խորհրդատվությամբ ՈԱ համար անհրաժեշտ քաղաքականությունների և ընթացակարգերի (օրինակ քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի գնահատման, ԿԾ-ի բարելավման և մշտադիտարկման, հարցումների անցկացման և այլն) մշակման համար, կազմակերպել է անհրաժեշտ հարցումներ, իրականացրել վերլուծություններ (2016-2019թթ. քոլեջի ՌԾ կատարողականի SWOT վերլուծությունը):

Հաշվի առնելով Քոլեջի կառուցվածքային առանձնահատկությունը և հնարավորությունները՝ ՈԱ պատասխանատուն գործընթացներն իրականացնում է քոլեջի ստորաբաժանումների հետ միասին: Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցում են նաև ուսանողները: Քոլեջում որակի ներքին ապահովման համակարգում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն արտացոլվում է կառավարման և խորհրդակցական մարմիններում ընդգրկվածությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ նրանց գործունեությունը դեռևս ունի պասիվ բնույթ: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ի հաշվետվողականության առաջնային օղակը մանկավարժական խորհուրդն է, որտեղ ներգրավված են քոլեջի բոլոր դասախոսները: Խորհրդում քննարկման առարկա են հանդիսանում քոլեջի ընթացիկ հարցերը:

Դասախոսները, ուսանողներն ու շրջանավարտները ՈԱ գործընթացներին ներգրավված են նաև հարցումների միջոցով, օրինակ ՈւԽ անդամները աջակցել են Ուսանողների շրջանում հարցումների կազմակերպմանը և անցկացմանը:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման նպատակով ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք ՊԿՉ մոդուլային ծրագրերին համապատասխան միասնական ձևաչափով մշակել են ՄԿԾ մասնագրերը և առարկայական մոդուլային ծրագրերը, գործընթացը համակարգվել է ՈԱ պատասխանատուի կողմից:

Քոլեջի ՈԱ համակարգը ներդրվել է 2017թ.–ին, սակայն տեսանելի քայլերը մեկնարկել են 2019թ. սկսած: ՈԱ պատասխանատուի ոլորտային փորձառությունը թույլ է տվել վերլուծական գործիքակազմի կիրառության միջոցով վեր հանել քոլեջի ռազմավարական խնդիրները, ինչը հիմք է հանդիսացել նոր 2019-2024թթ. ՌԾ-ի մշակման համար: Գործընթացների բարելավմանը նպաստել է փաստաթղթային հենքի համապատասխանեցումը գործընթացների տրամաբանությանը՝ որակի ապահովման տեսնակյունից, որի արդյունքում մշակվել է ՈԱ ձեռնարկը:

ՄՈՒՀ-ն իր գործունեության ինքնավերլուծությունը համարում է մշտադիտարկման կարևոր գործիքներից մեկը: Փորձագիտական այցի ընթացքում ինքնավերլուծության խմբի անդմաները պարզաբանեցին, որ բազմաթիվ գործընթացների բարելավման անհրաժեշտությունը ծագել է տեղեկատվության հավաքագրման, տվյալների վերլուծության արդյունքում, օրինակ նշվեց էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության վարման կարիքը, որը առաջիկայում նախատեսվում է իրականացնել Sharepoint ծրագրով: ՄՈՒՀ-ը մշտադիտարկման մեխանիզմ է դիտարկում նաև հնգամյա պլանավորման և կատարողականի նոր ձևաչափի ընդունումը: ՈԱ պատասխանատուն հարցումների արդյունքում վեր հանված խնդիրները ներկայացնում է մանկավարժական և տնօրինական խորհուրդներում, ինչպես նաև անմիջականորեն համագործակցում է տնօրենի և քոլեջի հիմնադրի հետ: Հաշվի առնելով տարբեր գործընթացների ակտիվ իրականացման ընթացքում լինելը՝ ՄՈՒՀ-ը դեռևս չի գնահատել բարելավման արդյունքները: ՈՆԱ համակարգի վերանայման մեխանիզմներ դեռևս նախատեսված չեն: Որոշ փաստաթղթեր բարելավվել են ՊԻԳԲ շրջափուլով, սակայն գործընթացների մեծամասնությունը պլանավորման և իրականացման փուլում են, կան որոշ գնահատումներ, իսկ բարելավումները ոչ միշտ են հիմնավորված վերլուծություններով,

օրինակ «Միջին մասնագիտական կրթական ծարգրերի դասընթացներում հետազոտական աշխատանքների կատարման կարգի» ներդնումը:

ՄՈՒՀ-ը 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում պլանավորել է իրականացնել Որակի ներքին ապահովման համակարգի բենչմարքինգ ազգային մակարդակով, սակայն դեռևս չի իրականացվել:

Քոլեջի որակի ապահովման ներքին համակարգը ստեղծել է բավարար հիմքեր, որոնք թույլ են տվել ՄՈՒՀ-ին իրականացնել ինքնավերլուծություն, ըստ այդմ ՄՈՒՀ-ը ստեղծել է աշխատանքային խումբ՝ տրամադրելով անհրաժեշտ ռեսուրսներ (մարդկային և նյութական) աշխատանքների իրականացման համար: Աշխատանքային խմբի անդամները խրախուսվել են կատարված աշխատանքի համար: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ աշխատանքային խմբի համար հիմնական դժվարությունը եղել է տվյալների հավաքագրումը, ոչ էլեկտրոնային փաստաթղթերում առկա տվյալների մշակումը: Ինքնավերլուծական զեկույցում ներկայացված տվյալները թույլ են տալիս գնահատել ՄՈՒՀ-ի կրթական և այլ գործընթացները, ՄՈՒՀ-ի առաջընթացը: Որպես արտաքին գնահատման հիմքեր ՄՈՒՀ-ը դիտարկում է ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվությունները ինչպես նաև՝ ինքնավերլուծության արդյունքները: ՈԱ պատասխանատուի կողմից իրականացված հարցումները նույնպես ծառայում են ՄՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը, սակայն հարցման բովանդակությունը դեռևս բարելավման կարիք ունի, օրինակ ուսանողների բավարարվածության հարցաթերթը ունի շուրջ 47 հարցադրում, որից մեծամասնությունը պահանջում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

Քոլեջում իրականացվող գործընթացների որակի մասին տեղեկատվության տրամադրումը ներքին շահակիցներին և դրանց թափանցիկությունն ապահովում են հետևյալ մեխանիզմները՝ Ընդհանուր ժողովի, տնօրինական և մանկավարժական խորհուրդների նիստերը, ամբիոնի վարիչների տարեվերջյան կատարողականները, ուսանողական խորհրդի և ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, ուսանողների և դասախոսների հետ ղեկավար անձնակազմի հանդիպում-քննարկումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ համակարգը ապահովում է թափանցիկություն՝ ցանկացած որակի ապահովմանը ուղղված գործընթաց հասանելի դարձնելով ներքին և արտաքին շահակիցներին:

Արտաքին շահակիցներից՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, քոլեջի մատուցած կրթության որակի մասին տեղեկատվություն է ստանում քոլեջի ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովի նախագահների կողմից ներկայացվող հաշվետվությամբ, ինչպես նաև ՀՀ ԿՏԱԿ-ի՝ էլեկտրոնային հարթակում տեղադրված համապատասխան տեղեկատվությամբ: Քոլեջի էլեկտրոնային կայքէջը նույնպես ապահովում է գործընթացների թափանցիկությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի պատրաստակամությունը իրագործելու ՈԱ քաղաքականությունը և առաջընթաց քայլ կատարելու ժամանակին համահունչ կրթական միջավայրի ստեղծման և ապահովման

համար։ Որակի ապահովման գործընթացների իրականացման համար կարևոր փաստաթղթային հենքի մշակումը թույլ է տվել ՄՈՒՀ-ին կանոնակարգել ՈԱ գործընթացները և հստակեցնել շահակիցների հետ համագործակցության շրջանակները։ Գործընթացների փաստաթղթավորումը, վարչարարության իրականացումը, տեղեկատվության թվայնացումը և պահպանումը դրական հիմքեր են ստեղծել ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության աշխատանքների իրականացման համար։ ՄՈՒՀ-ը ՈԱ պատասխանատուին վերապահում է վերահսկման գործառույթներ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին շահակիցները դեռևս լիարժեք չեն տիրապետում ՈԱ գործիքակազմին։ Այսուհանդերձ, ՈԱ պատասխանատուի աշխատանքի արդյունքում քոլեջում ձևավորված համագործակցային միջավայրը նպաստում է որակի ներքին ապահովման համակարգի ձևավորմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՈԱ պատասխանատուի գործուն դերակատարությունը ՄՈՒՀ-ում բազմաթիվ գործընթացների համակարգման և իրականացման աշխատանքներում, ինչպես նաև դրական են ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության իրականացման համար կատարված նախապատրաստական աշխատանքները։ Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՈԱ պատասխանատուի կողմից կատարված ծավալուն աշխատանքները ամրապնդվեն ինստիտուցիոնալ մակարդակում։

Փորձագիտական խումբը դրական է համարում ներքին և արտաքին շահակիցներին տարբեր մեխանիզմներով որակի ապահովման գործընթացներում ներգրավելու ՄՈՒՀ-ի ջանքերը։ Կարևորվում է շահակիցների նախաձեռնողականության խթանումը կառավարման օղակներում իրենց առնչվող կարիքների վերհանման նպատակով։ Հարցումների պարբերական իրականացումը կնպաստի բոլոր ոլորտների շարունակական բարելավմանը և շահակիցների ակտիվ ներգրավվածությանը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ հարցումների բազմազանեցումը և ներկայացուցչականության ապահովումը կնպաստեն քոլեջում իրականանացվող գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ և անկողմնակալ տվյալների հավաքագրմանը՝ ցույց տալով հետագա բարելավման ուղղությունները։

Փորձագիտական խումբը դրական է համարում ՈՆԱ համակարգի մշտադիտարկման և վերնայաման համար ստեղծված դրական նախադրյալները, դրանցից են ՈԱ ձեռնարկը, բենչմարքինգի քաղաքականությունը, շահակիցների ներգրավվածությունը, բարելավված կատարողական ձևաչափերը, որոնք հետագայում կնպաստեն արդյունքների գնահատման գործիքակազմի կիրառությանը՝ բարելավելով քոլեջի ՈՆԱ համակարգը։

Քոլեջի ներքին շահակիցները բարելավման գործընթացների արդյունքում պետք է կիսեն որակի ներքին ապահովման պատասխանտվության շրջանակները, այդպիսի դրական փորձ է եղել ինքնավերլուծության կատարումը՝ ձևավորելով նաև որակի աջակիցների շրջանակը։ Այսպիսով, գործընթացների շարունակականությունը ներկա փուլում կախված է որակի կառավարչի փորձառությունից, իսկ ինստիտուցիոնալ մակարդակում պատասխանատվությունը դեռևս կայացման փուլում է։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ՈՆԱ համակարգի մշտադիտարկման և գնահատման հստակ մեխանիզմների մշակումը թույլ կտա ՄՈՒՀ-ին հասնել տեսանելի ձեռքբերումների։

Դրական է, որ ՄՈՒՀ-ը ապահովում է որակի ապահովման գործընթացներում ներքին շահակիցներին տեղեկատվության հասանելիությունը՝ հաշվի առնելով քոլեջի փոքրաթիվ համակազմը, տեղեկատվության տարածումը մանկավարժական և տնօրինական խորհուրդների միջոցով կարելի է արդյունավետ համարել, սակայն աշխատակիցների և ուսանողների քանակական աճի պարագայում քոլեջը պետք է լրացուցիչ մեխանիզմներ ներդնի թափանցիկության ապահովման համար։ Դրական է, որ ՄՈՒՀ-ը հաշվետու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին իր կողմից տրամադրվող կրթության որակի մասին բաց տեղեկատվությամբ։ Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի որդեգրած ՈԱ վերաբերյալ տեղեկավության հրապարակման թափանցիկության քաղաքականությունը, որը դրական նախադրյալներ է ստեղծում ռազմավարական նպատակների հաջող իրականացման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը ձևավորել է որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, բարելավվել է փաստաթղթային հենքը և համապատասխանեցվել ՈԱ գործընթացների տրամաբանությանը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավված են ՈԱ գործընթացներում, ՈԱ պատասխանատուի ցուցաբերած գործուն աջակցությունը տեսանելի է ՈԱ մշակույթի ձևավորման և մշակված ընթացակարգերի ներդրման համար, ապահովվում է տեղեկատվության թափանցիկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Չի բավարարում**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Չի բավարարում**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23 փետրվարի, 2023 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ասյա Սիմոնյան- 2013թ. ավարտել է Գյումրու պետական մանկավարժական համալսարանի (ԳՊՄԻ) «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մագիստրոսական ծրագիրը: 2013-2017թթ. եղել է ԳՊՄԻ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտությամբ ասպիրանտ: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2017թ. մինչ օրս Շիրակի պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2007թ.-ից մինչ օրս Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում գեղարվեստական մարմնարզության մարզիչ-մանկավարժ է: 2017-2021թթ., և 2021-2024թթ. Օլիմպիական ցիկլերի գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար է: ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդի անդամ է: ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետ է: Մասնակցել է մի շարք մասնագիտաան վերապատրաստումների: 11 գիտական հոդվածների հեղինակ է:

Մերի Սարգսյան-1994-2000թթ. սովորել է Մխիթար Հերացու անվան Երևանի բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետում: 2007 թ.-ից մինչ այժմ աշխատում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում: 2016-2018 թթ. եղել է «Քույրական գործ» կրթական ծրագրի բաժնի վարիչ: 2021 թ.-ից մինչ այժմ տնօրենի տեղակալն է ուսումնական աշխատանքների գծով:

Աննա Սուքիասյան- 2003թ. ստացել է մագիստրոսի որակավորում Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի «Մանրէաբանության և կենսատեխոլոգիայի» ամբիոնում: 2012թ. շնորհվել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2015թ. ստացել է դոցենտի կոչում: 2014թ. իրականացրել է հետդոկտորական աշխատանք Մանրէաբանության և հիգիենայի ինստիտուտում, ԳԴ Բեռլինի «Շարիտե» բժշկական կենտրոնում, 2015-2017թթ. իրականացրել է հետդոկտորական աշխատանք Մոլեկուլային կենսատեխնոլոգիայի և ֆունկցիոնալ գենոմիկայի ամբիոնում, ԳԴ Վիլդաուի տեխնիկական համալսարանում: 2020 թ.-ից առ այսօր աշխատում է Եվրասիա միջազգային համալսարանում որպես դոցենտ և 2021 թ.-ից մինչ այժմ ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան Կենսաքիմիայի ինստիտուտում որպես Նեյրոհորմոնների կենսաքիմիայի բաժնի գիտաշխատող: Շուրջ 11 գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկների հեղինակ և համահեղինակ է:

Շուշաննա Կարապետյան- Սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» բաժնում: Մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

12.12.2022-15.12.2022 թթ.

	02.12.2022			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսում և ռեսուրսների դիտարկում			10:00	13:00	180 րոպե
	12.12.2022 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ			09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում փոխտնօրենի հետ			10:30	11:10	40 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ			11:20	12:00	40 րոպե
4	Հանդիպում ընդհանուր ժողովի հետ			12:10	13:00	50 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:10	14:10	60 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ			14:20	15:20	60 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ			15:40	16:40	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:50	18:00	70 րոպե
	13.12.2022 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ			09:30	10:30	60 րոպե
2	Զուգահեռ հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի հետ	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի պատասխանատուի հետ	Զուգահեռ հանդիպում «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի հետ	10:40	11:40	60 րոպե
3	Զուգահեռ հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	11:50	12:50	60 րոպե

4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:00	14:00	60 րոպե
5	Զուգահեռ հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում դասախոսների հետ(10-12 հոգի)			15:25	16:25	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	18:00	90 րոպե
	14.12.2022թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (Պրակտիկայի և կարիերայի բաժին, ուսումնական մաս, լաբորատորիա, արտաքին կապերի բաժին, ՄՌԿ և ընդհանուր բաժին, հաշվապահություն, գրադարան)			09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)			10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ			12:00	12:35	35 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			12:45	13:45	60 րոպե
5	Բաց հանդիպում			14:00	15:00	60 րոպե
5	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ			15:20	16:20	60 րոպե
6	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	18:00	90 րոպե
	15.12.2022թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ՈԱ պատասխանատուի հետ			09:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			10:45	12:45	120 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:00	14:00	60 րոպե
4	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			14:00	14:50	50 րոպե
5	Հանդիպում քոլեջի ղեկավար կազմի հետ			15:00	15:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՀՀ և արտասահմանյան այլ ուսումնական հաստատությունների ՈԱ պատասխանատուների հետ համագործակցության հիմքեր	2
2.	Տնօրինական խորհրդի կազմ	2
3.	Ստորաբաժանումների աշխատանքների իրականացման ամենամյա հաշվետվությունների հիման վրա իրականացրած բարելավումների օրինակներ	2
4.	Օրինակելի փորձի բացահայտման և դրա տարածման ուղիների, հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացված գործընթացները հավաստող հիմքեր	2
5.	Կրթական ծրագրերի մշտադիտարկումը և վերանայումը հավաստող հանդիպումների արձանագրություններ	3
6.	Դասալսումների վերլուծություններ	3
7.	Հրավիրյալ դասախոսների և վարպետաց դասերին առնչվող հիմքեր	3
8.	Ավարտական աշխատանքների օրինակներ	3
9.	Պետական ամփոփիչ ատեստավորման տոմսերի օրինակներ	3
10.	Իրավիճակային խնդիրներ	3
11.	Պրակտիկայի թղթապանակ	3
12.	Ուսանողների հետ տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների հիմքեր	4
13.	Վերջին 5 տարիների ընթացքում ուսանողների շրջանում իրականացված հարցումների վերլուծություն	4
14.	Քույրական գործ և Մանկաբարձական գործ մասնագիտություններով ավարտած շրջանավարտների՝ պետական քննության հաղթահարման հիմքեր	4
15.	Դասալսումների ժամանակցույց	5
16.	Մասնագիտական կլինիկաների ցանկ, որտեղ իրականացվում են գործնական դասընթացները	5
17.	Դասախոսական կազմի հետ ֆոկուս խմբային քննարկման հիմքեր	5
18.	Հաստիքացուցակ	5
19.	2021-2022 ՄՌԿ քաղաքականության արդյունավետության գնահատման արդյունքները	5
20.	2021-2022թթ բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլանները և հաշվետվությունները	5

21.	Մանկաբարձական և դեղագիտական ամբիոնների 2021-2022 ուս տարվա ընթացքում կատարած հետազոտական աշխատանքները	6
22.	Իրականցված բենչմարքինգի օրինակ	6
23.	Գրադարանային ֆոնդի մասին հիմքեր	7
24.	Ռեսուրսների գնահատման հաշվետվություն	7
25.	Շրջանավարտների մրցակցության ապահովման նպատակով պոտենցիալ գործատուների հետ համագործակցությունը հավաստող հիմքեր	9
26.	Էստոնիայի «Վալգայի մասնագիտական ուսումնական կենտրոնի» հետ կնքված պայմանագիր	9
27.	Արտաքին կապերի բաժնի կանոնակարգ	9
28.	Գործող համագործակցության պայմանագրեր	9
29.	ՈԱ աշխատանքային խմբերի հաշվետվություններ	10
30.	Իրականցված հարցումների լրացված օրինակներ	10
31.	2020-2021, 2021-2022 թթ. ՈԱ կատարողական զեկույցը	10
32.	2020-2021, 2021-2022 թթ .տարիների ամբիոնների և ուսումնական մասի հաշվետվությունները	10
33.	Արտաքին շահակիցների հետ իրականացրած հարցումների արդյունքներ	10
34.	ՄՌԿ և ընդհանուր բաժին, պրակտիկայի և կարիերայի բաժնի, ՈԱ պատասխանատուների տարեկան հաշվետվությունները	10
35.	Ամբիոնների կազմը՝ ըստ գործառույթների և դասավանդվող առարկաների	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. մանկաբարձական կաբինետ,
3. ատամնատեխնիկական լաբորատորիա,
4. համակարգչային լսարան,
5. ստորաբաժանումներ,
6. գրադարան,
7. արխիվ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈւԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ